

ՄԱՔՍԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ 1994 Թ. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀՈԴՎԱԾ VI-Ի
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սույնով Անդամները համաձայնում են հետևյալի մասին.

ԳԼՈՒԽ I

Հոդված 1. Սկզբունքներ

Հակազնազգման միջոց կիրառվում է միայն ՄԱԳՀ-1994-ի VI Հոդվածում նշված պարագաներում և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան նախաձեռնված¹ և իրականացված ուսումնասիրությունների համաձայն: Հետևյալ դրույթները ղեկավարում են ՄԱԳՀ-1994-ի VI Հոդվածի իրականացումն այնքանով, որքանով գործողություն է ձեռնարկված համաձայն հակազնազգման օրենսդրության կամ կանոնակարգման:

Հոդված 2. Գնազգման որոշում

2.1 Սույն Համաձայնագրի իմաստով արտադրանքը համարվում է գնազգող, այսինքն՝ իր սովորականից ցածր արժեքով այլ երկրի առևտրային շրջանակ մուտք արված, եթե մի երկրից մեկ այլ երկիր տվյալ արտադրանքի արտահանման գինը ցածր է առևտրային սովորական գործառույթների ընթացքում՝ արտահանող երկրում սպառման համար նման արտադրանքի վաճառքի համեմատելի գնից:

2.2 Եթե արտահանող երկրի ներքին շուկայում բացակայում է նման արտադրանքի վաճառքը առևտրային սովորական գործառույթների շրջանակներում, կամ եթե այդ վաճառքը թույլ չի տալիս պատշաճ համեմատություն կատարել՝ արտահանող երկրի ներքին շուկայում տիրող առանձնահատուկ հանգամանքների կամ վաճառքի փոքր ծավալների պատճառով², ապա գնազգման չափը որոշվում է՝ համեմատություն կատարելով համապատասխան երրորդ երկիր նման արտադրանքի արտահանման համեմատելի գնի հետ, եթե այդ գինը հատկանշական է, կամ՝ համեմատություն կատարելով ծագման երկրում արտադրության ծախքերի հետ՝ դրան գումարած վարչական, իրացման և ընդհանուր ծախքերի և շահույթի խելամիտ արժեքները:

2.2.1 Արտահանող երկրի ներքին շուկայում վաճառքը կամ երրորդ երկրին միավորի ինքնարժեքից (արտադրության հաստատուն ու փոփոխական ծախքերից)՝ դրան գումարած վարչական, իրացման և ընդհանուր ծախքերը, ցածր գներով վաճառքը կարող է գնային նկատառումներով դիտարկվել որպես առևտրային ոչ սովորական գործառույթ և կարող է անտեսվել սովորական արժեքը որոշելիս միայն այն դեպքում, երբ իրավասու մարմինը³ գտնում է, որ այդպիսի վաճառքը իրականացվել է տևական ժամանակահատվածի ընթացքում⁴, զգալի ծավալներով⁵ և այնպիսի գներով, որոնք հնարավորություն չեն տալիս պատշաճ ժամանակահատվածում վերականգնել բոլոր ծախքերը: Եթե վաճառքի գործարքի պահին արտադրանքի ինքնարժեքից ցածր գները մեծ են ուսումնասիրման ժամանակահատվածի համար արտադրանքի ինքնարժեքի կշռված միջինի արժեքից, ապա համարվում է, որ այդ գներով ապահովվում է պատշաճ ժամանակահատվածում ծախքերի վերականգումը:

2.2.1.1 2-րդ կետի նպատակով ծախքերը սովորաբար հաշվարկվում են՝ հիմնվելով ուսումնասիրության ենթակա արտահանողի կամ արտադրողի կողմից վարվող հաշվառման վրա, եթե այդ հաշվառումը համապատասխանում է արտահանող երկրում ընդունված հաշվապահական ընդհանուր սկզբունքներին և պատշաճորեն է արտացոլում խնդրո առարկա արտադրանքի արտադրության և իրացման հետ կապված ծախքերը:

¹ «Նախաձեռնված» հասկացությունը սույն Համաձայնագրի կիրառմամբ նշանակում է ընթացակարգային այն գործողությունը, որով Անդամը պաշտոնապես ուսումնասիրություն է սկսում 5-րդ Հոդվածի համաձայն:

² Արտահանող երկրում ներքին սպառման համար նախատեսված նման արտադրանքի վաճառքը սովորաբար բավարար քանակ է համարվում այդ արտադրանքի սովորական արժեքի որոշման համար, եթե այդ վաճառքը կազմում է ներմուծող Անդամին տվյալ արտադրանքի վաճառքի 5 տոկոսը կամ ավելին՝ այն պայմանով, որ ավելի փոքր հարաբերակցությունը պետք է ընդունելի լինի, երբ փաստերը ցույց են տալիս, որ այդպիսի ցածր հարաբերակցությամբ ներքին վաճառքը, այնուամենայնիվ, բավարար մեծություն ունի պատշաճ համեմատություն ապահովելու համար:

³ Երբ սույն Համաձայնագրում օգտագործվում է «իրավասու մարմին» հասկացությունը, այն մեկնաբանվում է որպես համապատասխան բարձր մակարդակի իրավասու մարմին:

⁴ Տևական ժամանակահատվածը սովորաբար պետք է լինի մեկ տարի, բայց ոչ մի դեպքում վեց ամսից պակաս չպետք է լինի:

⁵ Ինքնարժեքից ցածր գներով վաճառքը կատարված է զգալի ծավալներով, եթե իրավասու մարմինը գտնում է, որ սովորական արժեքի որոշման նպատակով քննարկվող առևտրային գործառույթների վաճառքի գնի կշռված միջինը փոքր է միավորի ինքնարժեքի կշռված միջինից, կամ ինքնարժեքից ցածր գներով վաճառքի ծավալը կազմում է սովորական արժեքի որոշման համար քննարկվող առևտրային գործառույթներում իրականացված վաճառքի ծավալի 20 տոկոսը կամ ավելին:

Իրավասու մարմինը հաշվի է առնում ծախսերի պատշաճ բաշխմանը վերաբերվող բոլոր առկա փաստերը, ներառյալ՝ ուսումնասիրության ընթացքում արտահանողի կամ արտադրողի ներկայացրածները, որոնք մասնավորապես առնչվում են համապատասխան մաշվածքագրման և արժենվագեցման ժամանակահատվածներին, արտադրամիջոցների և զարգացման ծախսերի թույլատրելի նվազեցումներին, եթե արտահանողը կամ արտադրողը նախկինում կիրառել է այդպիսի բաշխումները: Ծախսերի մասով համապատասխան ճշգրտումներ են կատարվում՝ կապված արտադրությանն ապագա և(կամ) ընթացիկ օգուտ բերող չկրկնվող ծախսերի կամ էլ այնպիսի դեպքերի հետ, երբ ուսումնասիրման ժամանակահատվածում ծախսերն իրենց վրա կրում են արտադրության մեկնարկային գործառույթների ազդեցությունը⁶, եթե դրանք դեռ արտահայտված չեն սույն ենթակետի համաձայն արված ծախսերի բաշխման մեջ:

2.2.2 2-րդ կետի նպատակով, վարչական, իրացման և ընդհանուր ծախսերի և շահույթի արժեքները հիմնվում են ուսումնասիրության ենթակա արտահանողի կամ արտադրողի կողմից նման արտադրանքի արտադրությանն ու սովորական առևտրային գործառույթների ընթացքում դրա վաճառքին վերաբերող փաստացի տվյալների վրա: Եթե այդ արժեքները չեն կարող այս կերպ որոշվել, ապա դրանք կարող են որոշվել՝ հիմնվելով.

-) այն փաստացի արժեքների վրա, որոնք ունենում ու կատարում է խնդրո առարկա արտահանողը կամ արտադրողը՝ նույն ընդհանուր տեսակի արտադրանքների արտադրության ու ծագման երկրի ներքին շուկայում դրանց իրացման առնչությամբ.
-) այն ծախսերի փաստացի արժեքների կշռված միջինի վրա, որոնք ունենում ու կատարում են ուսումնասիրության ենթակա այլ արտահանողները կամ արտադրողները՝ նման արտադրանքի արտադրության ու ծագման երկրի ներքին շուկայում դրա իրացման առնչությամբ.
-) որևէ այլ հիմնավոր եղանակի վրա, եթե դրանով սահմանված շահույթի արժեքը չի գերազանցում այն շահույթը, որ այլ արտահանողներ կամ արտադրողներ սովորաբար ստանում են ծագման երկրի ներքին շուկայում նույն ընդհանուր տեսակի արտադրանքների իրացումից:

2.3 Այն դեպքերում, երբ արտահանման գին չկա կամ երբ համապատասխան իրավասու մարմինը պարզում է, որ արտահանման գինը արժանահավատ չէ՝ արտահանողի և ներմուծողի կամ երրորդ կողմի միջև եղած համակցվածության կամ փոխհատուցողական համաձայնության պատճառով, արտահանման գինը կարող է կազմվել՝ ելնելով այն գնից, որով ներմուծված արտադրանքները առաջին անգամ վերավաճառվում են անկախ գնորդին, կամ իրավասու մարմնի որոշած որևէ պատշաճ հիմքից, եթե ներմուծված արտադրանքներն անկախ գնորդին չեն վերավաճառվում կամ վերավաճառվում են ոչ այն վիճակով, որով ներմուծվել են:

2.4 Արտահանման գնի և սովորական արժեքի միջև համեմատությունը կատարվում է անաչառորեն: Այդ համեմատությունը կատարվում է առևտրային միևնույն մակարդակների, սովորաբար արտադրանքի գործարանից դուրս առաքման մակարդակի համար և հնարավորինս միևնույն ժամանակում կատարված վաճառքի համար: Յուրաքանչյուր դեպքի համար համապատասխան ճշգրտումներ են կատարվում՝ կապված այն տարբերությունների հետ, որոնք ազդում են գների համեմատելիության վրա, ներառյալ՝ վաճառքի պայմանների, հարկման, առևտրային փուլերի, քանակների, ֆիզիկական հատկանիշների և ցանկացած այլ տարբերությունների հետ, որոնք ցույց է տրվում, որ նույնպես ազդում են գների համեմատելիության վրա⁷: 3-րդ կետում հիշատակված դեպքերում ճշգրտումներ են կատարվում նաև՝ կապված ծախսերի հետ, ներառյալ՝ ներմուծման ու վերավաճառքի միջև առաջացած տուրքերն ու հարկերը, և ստացվող շահույթը: Եթե այդ դեպքերում գների համեմատելիությունը փոփոխություն է կրում, ապա իրավասու մարմինը արտադրանքի սովորական արժեքը հաստատում է առևտրային այնպիսի մակարդակի համար, որը համարժեք է արտահանման գնի հաշվարկման առևտրային մակարդակին, կամ կատարում է սույն կետով սահմանված համապատասխան ճշգրտումները: Իրավասու մարմինը խնդրո առարկա կողմերի համար հատկորոշում է այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են անաչառ համեմատության համար, և փաստարկների չհիմնավորված ծանրություն չի դնում նրանց վրա:

2.4.1 Եթե 4-րդ կետի համաձայն կատարվող համեմատության ժամանակ տարադրամի փոխարկում է պահանջվում, ապա այդ փոխարկման ժամանակ պետք է օգտագործվի

⁶ Մեկնարկային գործառույթների համար ճշգրտում կատարելիս հաշվի են առնվում մեկնարկային ժամանակահատվածի վերջում եղած ծախսերը կամ էլ, եթե այդ ժամանակահատվածն ավարտվում է ուսումնասիրման ժամանակահատվածից հետո, ապա ամենավերջին ժամանակում եղած ծախսերը, որոնք իրավասու մարմինը կարող է պատշաճորեն հաշվի առնել ուսումնասիրության ընթացքում:

⁷ Հասկացվում է, որ վերը նշված որոշ գործոններ կարող են միմյանց հետ վերադրվել, և իրավասու մարմինը պետք է ապահովի, որ

վաճառքի օրվա⁸ փոխարժեքը՝ պայմանով, որ եթե ապառնի (f a d) շուկայում կատարված օտարերկրյա տարադրամի վաճառքն ուղղակիորեն կապված է արտահանման վաճառքի տվյալ գործարքի հետ, ապա օգտագործվում է ապառնի վաճառքի փոխարժեքը: Տարադրամի փոխարժեքի տատանումներն անտեսվում են, և ուսումնասիրության ընթացքում իրավասու մարմինն արտահանողներին առնվազն 60 օր ժամանակ է տալիս՝ ճշգրտելու իրենց արտահանման գները, որպեսզի արտահայտեն ուսումնասիրության ընթացքում եղած փոխարժեքի տևական տեղաշարժերը:

2.4.2 Ուսումնասիրության փուլում գնագցման չափի գոյությունը սովորաբար հաստատվում է՝ հիմնվելով սովորական արժեքի կշռված միջինի և բոլոր համեմատելի արտահանման գործարքների գների կշռված միջինի համեմատության, կամ առանձին-առանձին գործարքների սովորական արժեքի և արտահանման գնի համեմատության վրա՝ հաշվի առնելով 4-րդ կետի անաչառ համեմատությունը դեկավարող դրույթները: Կշռված միջինով հաշվարկված սովորական արժեքը կարող է համեմատվել արտահանման առանձին գործարքների գների հետ, եթե իրավասու մարմինը նկատում է միտում, որ արտահանման գները էականորեն տարբեր են տարբեր գնորդների մոտ, աշխարհագրական շրջաններում կամ ժամանակահատվածներում, և եթե բացատրություն է տրվում, թե ինչու հնարավոր չէ այդ տարբերությունները համապատասխանաբար հաշվի առնել կշռված միջինների միջև կամ առանձին-առանձին գործարքների միջև համեմատության կիրառմամբ:

2.5 Եթե արտադրանքները չեն ներմուծվում ուղղակիորեն ծագման երկրից, այլ ներմուծող Անդամ երկիր են արտահանվում միջանկյալ երկրից, ապա արտադրանքների գինը, որով դրանք վաճառվել են արտահանող երկրից ներմուծող Անդամին, սովորաբար համեմատվում է արտահանող երկրում եղած համեմատելի գնի հետ: Այնուամենայնիվ, համեմատությունը կարող է կատարվել ծագման երկրում եղած գնի հետ, եթե, օրինակ՝ արտահանող երկրով կատարվել է միայն արտադրանքների տարանցիկ փոխադրում, կամ այդպիսի արտադրանքներ չեն արտադրվում արտահանող երկրում, կամ արտահանող երկրում դրանց համար համեմատելի գին չկա:

2.6 Սույն Համաձայնագրի շրջանակներում «մնան արտադրանքը» (« d a e») մեկնաբանվում է որպես արտադրանք, որը նույնական է, այսինքն՝ բոլոր առումներով համանման է խնդրո առարկա արտադրանքին, կամ այդպիսի արտադրանքի բացակայության դեպքում՝ մեկ այլ արտադրանք, որը բոլոր առումներով համանման չլինելով հանդերձ՝ ունի խնդրո առարկա արտադրանքի հատկանիշներին շատ մոտ հատկանիշներ:

2.7 Սույն Հոդվածը չի վնասում ՄԱԳՀ-1994-ի I Հավելվածի VI Հոդվածի 1-ին կետի վերաբերյալ երկրորդ Լրացուցիչ դրույթը:

Հոդված 3. Վնասի որոշում⁹

3.1 ՄԱԳՀ-1994-ի VI Հոդվածի նպատակով վնասի որոշումը հիմնվում է դրական ապացույցների վրա և ընդգրկում է ա) գնագցող ներմուծման ծավալների, և ներքին շուկայում մնան արտադրանքի գների վրա գնագցող ներմուծման ազդեցության անաչառ քննությունը և՛ բ) այդ ներմուծման հետևանքով այդ արտադրանքների ներքին արտադրողների վրա թողած ազդեցության անաչառ քննությունը:

3.2 Գնագցող ներմուծման ծավալների կապակցությամբ՝ ուսումնասիրող իրավասու մարմինը հաշվի է առնում՝ տեղի է ունեցել արդյոք գնագցող ներմուծման նշանակալի աճ ինչպես բացարձակ իմաստով, այնպես էլ ներմուծող Անդամի ներքին արտադրության կամ սպառման նկատմամբ հարաբերական իմաստով: Գների վրա գնագցող ներմուծման ազդեցության կապակցությամբ՝ ուսումնասիրող իրավասու մարմինը հաշվի է առնում՝ գնագցող ներմուծմամբ տեղի է ունեցել արդյոք գնի նշանակալի կրճատում՝ համեմատած ներմուծող Անդամի ներքին արտադրության մնան արտադրանքի գնի հետ, կամ արդյոք գնագցող ներմուծման ճնշմամբ նշանակալիորեն իջեցվել են գները, կամ կասեցվել է գների աճը, որը տեղի կունենար այլ դեպքում: Այս գործոններից որևէ մեկը կամ մի քանիսը չեն կարող վճռորոշ լինել:

3.3 Եթե հսկազնագցման ուսումնասիրություն է կատարվում միաժամանակ մեկից ավելի երկրներից արտադրանքի ներմուծումների նկատմամբ, ապա ուսումնասիրող իրավասու մարմինը կարող է կատարել այդ ներմուծումների ունեցած ազդեցության ընդհանուր գնահատում միայն այն դեպքում, երբ գտնում է, որ ա) յուրաքանչյուր երկրից եկող ներմուծման առնչությամբ սահմանված գնագցման չափը մեծ է 5-րդ

սույն դրույթի համաձայն արդեն արված ճշգրտումների կրկնություն չլինի:

⁸ Սովորաբար վաճառքի օր է վաճառքի պայմանագրի կնքման, գնման պատվերի ներկայացման, պատվերի հաստատման կամ ապրանքագրում նշված օրերից այն, որով սահմանված են վաճառքի հիմնական պայմանները:

⁹ Սույն Համաձայնագրով «վնաս» հասկացությունը, եթե այլ կերպ չի հատկորոշված, նշանակում է ներքին արդյունաբերական ճյուղին հասցված նյութական վնաս, ներքին արդյունաբերական ճյուղին նյութական վնասի վտանգ կամ այդ արդյունաբերական ճյուղի ստեղծման էական կասեցում, և մեկնաբանվում է համաձայն սույն Հոդվածի դրույթների:

Հոդվածի 8-րդ կետով սահմանված նվազագույնից, և յուրաքանչյուր երկրից եկող ներմուծման ծավալը անտեսելի չէ, և՛ բ) այդ ներմուծումների ունեցած ազդեցության ընդհանուր գնահատումը նպատակահարմար է՝ ելնելով ներմուծվող արտադրանքների միջև մրցակցության պայմաններից և ներմուծվող ու ներքին արտադրության մասն արտադրանքների միջև եղած մրցակցության պայմաններից:

3.4 Խնդրո առարկա ներքին արդյունաբերական ճյուղի վրա գնագող ներմուծման ունեցած ազդեցության քննությունը ներառում է արդյունաբերական ճյուղի վիճակին առնչվող բոլոր համապատասխան տնտեսական գործոնների ու ցուցանիշների գնահատումը, ներառյալ՝ վաճառքի ծավալների, շահույթների, թողարկված արտադրանքի, շուկայում ունեցած բաժնեմասի, արտադրողականության, ներդրումների հատույցի, արտադրողական կարողությունների շահագործման փաստացի և հնարավոր անկումը, ներքին գների վրա ազդեցություն ունեցող գործոնները, գնագցման չափի մեծությունը, դրամական հոսքի, արտադրանքի պաշարների, զբաղվածության, աշխատավարձերի, արտադրության աճի, արդատրամիջոցների ստեղծման կամ ներդրումներ ներգրավելու կարողության վրա փաստացի և հնարավոր բացասական ազդեցությունները: Նշված ցանկը սպառիչ չէ, և այս գործոններից որևէ մեկը կամ մի քանիսը չեն կարող վճռորոշ լինել:

3.5 Պետք է ցույց տրվի, որ գնագող ներմուծումները 2-րդ և 4-րդ կետերում նշված գնագցման ազդեցությունների միջոցով վնաս են հասցնում սույն Համաձայնագրի իմաստով: Գնագող ներմուծման և ներքին արդյունաբերական ճյուղին հասցված վնասի միջև եղած պատճառահետևանքային կապի ապացույցը հիմնվում է իրավասու մարմնի տրամադրության տակ եղած բոլոր գործին առնչվող ապացույցների քննության վրա: Իրավասու մարմինը քննության է առնում նաև գնագող ներմուծումից տարբեր բոլոր հայտնի այլ գործոնները, որոնք միաժամանակ վնաս են հասցնում ներքին արդյունաբերական ճյուղին, և այդ այլ գործոնների պատճառած վնասները չպետք է վերագրվեն գնագող ներմուծումներին: Այս իմաստով, գործոնները, որոնք կարող են գործին առնչվել, այլոց հետ ընդգրկում են ոչ գնագող գներով իրացված ներմուծումների ծավալներն ու գները, պահանջարկի նվազումը կամ սպառողական վարքագծի փոփոխությունները, ներքին և օտարերկրյա արտադրողների միջև մրցակցությունը և նրանց կիրառած առևտուրը սահմանափակող միջոցները, տեխնոլոգիայի զարգացումները, ներքին արդյունաբերական ճյուղի արտադրողականությունն ու արտահանման կատարողականությունը:

3.6 Գնագող ներմուծման ունեցած ազդեցությունը գնահատվում է նման արտադրանքի ներքին արտադրության առնչությամբ, եթե առկա տեղեկությունները հնարավորություն են տալիս առանձին հատկորոշել տվյալ արտադրությունը՝ ելնելով այնպիսի չափանիշներից, ինչպիսիք են արտադրական գործընթացը, արտադրողի իրացման ծավալներն ու նրա շահույթը: Եթե նման առանձնացված հատկորոշումը հնարավոր չէ, ապա գնագող ներմուծման ազդեցությունը գնահատվում է՝ քննության առնելով արտադրանքների հնարավոր այն ամենանեղ խմբի կամ շարքի արտադրությունը, որն իր մեջ ներառում է նման արտադրանքը, և որի համար հնարավոր է անհրաժեշտ տեղեկություններն ապահովել:

3.7 Նյութական վնասի վտանգի որոշումը հիմնվում է փաստերի և ոչ լոկ անհիմն պնդումների, ենթադրությունների կամ հեռավոր հնարավորության վրա: Հանգամանքների փոփոխությունը, որով կստեղծվի մի իրավիճակ, երբ գնագող ներմուծումը վնաս կհասցնի, պետք է հստակորեն կանխատեսելի և մոտավորապես լինի¹⁰: Նյութական վնասի վտանգի գոյությունը որոշելիս իրավասու մարմինն այլ գործոնների թվում հաշվի է առնում նաև.

-) ներքին շուկա գնագող ներմուծման ծավալների աճի նշանակալի թափը, որը ցույց է տալիս ներմուծման էական աճի հավանականությունը.
-) արտահանողի կարողությունների էական աճը, որը մոտավորապես է կամ բավական հեշտությամբ տնօրինելի, և որը ցույց է տալիս ներմուծող Անդամի շուկա գնագող արտահանման էական աճի հնարավորությունը՝ հաշվի առնելով արտահանման հավելյալ ծավալները սպառելու ունակ այլ արտահանման շուկաների առկայությունը.
-) արդյոք ներմուծման գներն այնպիսին են, որ զգալիորեն կճնշեն կամ կզսպեն ներքին գները և հավանաբար կմեծացնեն պահանջարկը հետագա ներմուծումների համար, և՛
-) ուսումնասիրվող արտադրանքի պաշարները:

Այս գործոններից ոչ մեկն ինքնին չի կարող վճռորոշ լինել, սակայն քննարկված գործոնների ամբողջությունը պետք է բերի այն եզրակացության, որ հետագա գնագող ներմուծումն անխուսափելի է, և որ նյութական վնաս կհասցվի պաշտպանական միջոցներ չկիրառելու դեպքում:

3.8 Այն դեպքերի կապակցությամբ, երբ գնագող ներմուծումները ստեղծում են նյութական վնասի վտանգ, հակագնագցման միջոցները քննարկվում, իսկ դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են հատուկ ուշադրությամբ:

¹⁰ Ոչ սպառիչ, բայց մեկ օրինակ է, երբ համոզիչ պատճառ կա հավատալու, որ մոտ ապագայում արտադրանքի ներմուծումը

Հոդված 4. Ներքին արդյունաբերական ճյուղի սահմանում

4.1 Սույն Համաձայնագրի իմաստով «ներքին արդյունաբերական ճյուղ» հասկացությունը վերաբերում է ներքին նման արտադրանք արտադրողների ամբողջությանը կամ այդ արտադրողներից նրանց, որոնք համատեղ թողարկում են այդ արտադրանքի համախառն ներքին արտադրության հիմնական մասը, բացառությամբ՝ որ.

-) եթե արտադրողները փոխկապակցված են¹¹ արտահանողների կամ ներմուծողների հետ, կամ էլ իրենք են ենթադրաբար գնագող արտադրանքի ներմուծողներ, ապա «ներքին արդյունաբերական ճյուղ» հասկացությունը կարող է մեկնաբանվել, որ վերաբերում է մնացյալ արտադրողներին.
-) բացառիկ հանգամանքների բերումով. Անդամի տարածքը կարող է խնդրո առարկա արտադրության մասով բաժանված լինել երկու կամ ավելի մրցակից շուկաների, և յուրաքանչյուր շուկայի արտադրողները կարող են դիտարկվել որպես առանձին արդյունաբերական ճյուղ, եթե ա) այդ շուկայի արտադրողներն այդ շուկայում իրացնում են խնդրո առարկա արտադրանքի իրենց ամբողջ կամ գրեթե ամբողջ արտադրանքը, և՛ բ) այդ շուկայում եղած պահանջարկը որևէ էական չափով չի բավարարվում Անդամի տարածքի որևէ այլ տեղում տեղակայված խնդրո առարկա արտադրանք արտադրողների կողմից: Այդպիսի հանգամանքներում կարող է համարվել, որ վնասն առկա է, նույնիսկ եթե վնասված չէ ներքին արդյունաբերական ամբողջ ճյուղի հիմնական մասը՝ պայմանով, որ գնագող ներմուծումները կենտրոնացված են այդ մեկուսացված շուկայում, և այնուհետև, որ գնագող ներմուծումները վնաս են հասցնում այդ շուկայի ամբողջ կամ գրեթե ամբողջ արտադրանքն արտադրողներին:

4.2 Եթե մեկնաբանվում է, որ ներքին արդյունաբերական ճյուղը վերաբերում է որոշակի տարածաշրջանի, այսինքն՝ 1« » կետում սահմանված շուկայի արտադրողներին, ապա հակագնագցման տուրքերը գանձվում են¹² միայն խնդրո առարկա այն արտադրանքների նկատմամբ, որոնք առաքված են այդ տարածաշրջանում վերջնական սպառման համար: Եթե ներմուծող Անդամի սահմանադրական օրենքը թույլ չի տալիս հակագնագցման տուրքերի գանձում այդ հիմքի վրա, ապա ներմուծող Անդամը հակագնագցման տուրքերն առանց սահմանափակման կարող է գանձել միայն այն դեպքում, երբ ա) արտահանողներին հնարավորություն է տրվել դադարեցնելու խնդրո առարկա տարածաշրջան գնագող գներով արտահանումը կամ այլ կերպ երաշխիքներ տալու 8-րդ Հոդվածի համաձայն, սակայն այդ կապակցությամբ շտապ կերպով համապատասխան երաշխիքներ չեն տրվել, և՛ բ) այդ տուրքերը չեն կարող գանձվել միայն առանձին արտադրողների արտադրանքների նկատմամբ, որոնք մատակարարում են խնդրո առարկա տարածաշրջանը:

4.3 Եթե ՄԱԳՀ-1994-ի XXIV Հոդվածի 8«ա» կետի համաձայն երկու կամ ավելի երկրներ հասել են միասնականացման այնպիսի մակարդակի, որ նրանք ունեն մեկ, միասնական շուկայի հատկանիշներ, ապա որպես միասնականացված ամբողջ տարածքի արդյունաբերական ճյուղ վերցվում է 1-ին կետում նշված ներքին արդյունաբերական ճյուղը:

4.4 3-րդ Հոդվածի 6-րդ կետի դրույթները տարածվում են սույն Հոդվածի վրա:

Հոդված 5. Ռեսուրսների մատչելիության նախաձեռնում և հետագա իրականացում

5.1 Բացառությամբ 6-րդ կետում նախատեսվածի, որևէ ենթադրվող գնագցման առկայությունը, աստիճանն ու ազդեցությունը պարզելու նպատակով ռեսուրսների մատչելիության կարող է նախաձեռնվել ներքին արդյունաբերական ճյուղի կողմից կամ նրա անունից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա:

5.2 1-ին կետի համաձայն ներկայացված գրավոր դիմումը պետք է պարունակի ապացույցներ՝ ա) գնագցման, բ) վնասի՝ ՄԱԳՀ-1994-ի VI Հոդվածի իմաստով, ինչպես այն մեկնաբանված է սույն Համաձայնագրով, և՛ գ) գնագող ներմուծման ու ենթադրվող վնասի միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ: Անհիմն հայտարարությունը, որը հիմնավորված չէ գործին առնչվող ապացույցներով, չի կարող բավարար համարվել սույն կետի պահանջների ապահովման համար: Դիմումը պարունակում է

գնագող գներով էականորեն կաճի:

¹¹ Սույն կետի իմաստով արտադրողները փոխկապակցված են համարվում արտահանողների կամ ներմուծողների հետ միայն, եթե ա) նրանցից մեկը ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է մյուսին, կամ՝ բ) նրանք երկուսն էլ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են երրորդի կողմից, կամ՝ գ) նրանք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդին, ընդ որում՝ հավատարու կամ կասկածելու հիմքեր կան, որ խնդրո առարկա արտադրողի վարքն այդ կապակցության հետևանքով տարբերվում է անկախ արտադրողների վարքից: Սույն կետի իմաստով համարվում է, որ մի անձը վերահսկում է մյուսին, եթե առաջինն ըստ դիրքի կարող է իրավականորեն կամ գործնականում սահմանափակել կամ ուղղորդել վերջինին:

¹² Սույն համաձայնագրում «գանձում» նշանակում է տուրքի կամ հարկի վերջնական կամ եզրափակիչ իրավական գնահատումը կամ հավաքումը:

դիմողին խելամտորեն մատչելի հետևյալ տեղեկությունները.

-) դիմողի ինքնությունը և դիմողի՝ նման արտադրանքի ներքին արտադրության ծավալի և արժեքի նկարագրությունը: Եթե դիմումը ներկայացված է ներքին արդյունաբերական ճյուղի անունից, ապա դիմումի մեջ մատնանշվում է արդյունաբերական այն ճյուղը, որի անունից այն ներկայացված է՝ թվելով նման արտադրանքի հայտնի ներքին արտադրողներին (կամ նման արտադրանքի ներքին արտադրողների միությունները), և հնարավորության սահմաններում՝ այդ արտադրողներին բաժին ընկնող նման արտադրանքի ներքին արտադրության ծավալների և արժեքի նկարագրությունը.
-) ենթադրյալ գնագոյ առտադրանքի ամբողջական նկարագրությունը, խնդրո առարկա ծագման կամ արտահանող երկրի կամ երկրների անունները, յուրաքանչյուր հայտնի արտահանողի կամ օտարերկրյա արտադրողի ինքնությունը և տվյալ արտադրանքի հայտնի ներմուծողների ցանկը.
-) տեղեկություն արտահանման կամ ծագման երկրի կամ երկրների շուկաներում ներքին սպառման համար խնդրո առարկա արտադրանքի իրացման գների վերաբերյալ (կամ, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն արտահանման կամ ծագման երկրից կամ երկրներից այլ երրորդ երկիր կամ երկրներ տվյալ արտադրանքի վաճառքի գների, կամ այդ արտադրանքի հաշվարկային արժեքի վերաբերյալ), և տեղեկություն արտադրանքի արտահանման գների կամ, անհրաժեշտության դեպքում, ներմուծող Անդամի տարածքում անկախ գնորդին արտադրանքի առաջին վերավաճառքի գների վերաբերյալ.
-) տեղեկություն ենթադրյալ գնագոյ ներմուծման ծավալների փոփոխությունների, ներքին շուկայում նման արտադրանքի գների վրա այդ ներմուծման ազդեցության ու դրա հետևանքով ներքին արդյունաբերական ճյուղի վրա ներմուծումների ազդեցության վերաբերյալ, որը ցույց է տրվում ներքին արտադրության վիճակին առնչվող համապատասխան գործոններով և ցուցանիշներով, ինչպիսիք են 3-րդ Հոդվածի 2-րդ և 4-րդ կետերում թվարկվածները:

5.3 Ուսումնասիրության նախաձեռնումը հիմնավորող բավարար ապացույցների առկայությունը պարզելու նպատակով իրավասու մարմինը քննության է առնում դիմումի մեջ ներկայացված ապացույցների ճշտությունն ու համապատասխանությունը:

5.4 1-ին կետի համաձայն ուսումնասիրություն չի նախաձեռնվում, քանի դեռ իրավասու մարմինը, հիմնվելով նման արտադրանքի ներքին արտադրողների՝ դիմումին կողմ կամ դեմ լինելու¹³ աստիճանի քննության վրա, չի պարզել, որ դիմումը ներկայացվել է ներքին արդյունաբերական ճյուղի կողմից կամ նրա անունից¹⁴: Դիմումը համարվում է «ներքին արդյունաբերական ճյուղի կողմից կամ նրա անունից» ներկայացված, եթե դիմումին կողմ են այն ներքին արտադրողները, որոնց համատեղ արտադրությունը կազմում է ներքին արդյունաբերական ճյուղի այն մասի նման արտադրանքի ընդհանուր արտադրության 50 տոկոսը, որն այդ դիմումի առնչությամբ արտահայտել է իր կողմ կամ դեմ լինելը: Այնուամենայնիվ, ուսումնասիրություն չի նախաձեռնվում այն դեպքում, երբ դիմումին կողմ արտահայտված արտադրողներին բաժին ընկնող արտադրությունը փոքր է ներքին արդյունաբերական ճյուղի նման արտադրանքի ընդհանուր արտադրության 25 տոկոսից:

5.5 Իրավասու մարմինը խուսափում է ուսումնասիրություն նախաձեռնելու դիմումի հրապարակայնացումից, քանի դեռ որոշում չի կայացվել ուսումնասիրությունը նախաձեռնել: Այնուամենայնիվ, պատշաճորեն փաստաթղթավորված դիմումը ստանալուց հետո և նախքան ուսումնասիրություն նախաձեռնելու գործին անցնելը, իրավասու մարմինն այդ մասին ծանուցում է խնդրո առարկա արտահանող Անդամի կառավարությանը:

5.6 Եթե հատուկ դեպքերում իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրություն նախաձեռնել առանց ներքին արդյունաբերական ճյուղի կողմից կամ նրա անունից այդպիսի ուսումնասիրություն նախաձեռնելու մասին գրավոր դիմում ստանալու, ապա կարող է դա անել, եթե ունի ուսումնասիրության նախաձեռնումը հիմնավորող՝ 2-րդ կետում նկարագրված բավարար ապացույցներ գնագցման, վնասի և պատճառահետևանքային կապի վերաբերյալ:

5.7 Գնագցման ու վնասի վերաբերյալ ապացույցները միաժամանակ դիտարկվում են ա) ուսումնասիրություն նախաձեռնելու կամ չնախաձեռնելու մասին որոշման ժամանակ, և՛ բ) դրանից հետո ուսումնասիրության ընթացքում՝ սկսած ոչ ուշ, քան այն ամենավաղ օրվանից, երբ սույն Համաձայնագրի դրույթների համաձայն կարող են ժամանակավոր միջոցներ կիրառվել:

¹³ Այն դեպքում, երբ արդյունաբերական ճյուղերը տարանջատ են և ընդգրկում են բացառիկ մեծ թվով արտադրողներ, իրավասու մարմինը կարող է կողմն ու դեմը որոշել վիճակագրորեն հիմնավորված եղանակների կիրառմամբ:

¹⁴ Անդամները տեղյակ են, որ որոշ Անդամների տարածքում նման արտադրանքի ներքին արտադրողների աշխատողները կամ այդ աշխատողների ներկայացուցիչները կարող են 1-ին կետի համաձայն ուսումնասիրության դիմում ներկայացնել կամ կողմ լինել դրան:

5.8 1-ին կետի համաձայն ներկայացված դիմումը մերժվում է, և ուսումնասիրությունը շտապ կարգով դադարեցվում է այն պահին, երբ իրավասու մարմինը համոզվում է, որ տվյալ գործը շարունակելու համար առկա չեն կամ՝ գնագցման, կամ՝ վնասի գոյության բավարար ապացույցներ: Ուսումնասիրությունն անմիջապես դադարեցվում է այն դեպքերում, երբ իրավասու մարմինը գտնում է, որ գնագցման չափը նվազագույն է, կամ որ գնագցող ներմուծման փաստացի կամ հնարավոր ծավալը կամ վնասն անտեսելի են: Գնագցման չափը համարվում է նվազագույն, եթե այդ չափը փոքր է արտահանման գնի 2 տոկոսից: Գնագցող ներմուծման ծավալը սովորաբար համարվում է անտեսելի, երբ պարզվում է, որ առանձին երկրից գնագցող ներմուծման ծավալը կազմում է ավելի քիչ, քան ներմուծող Անդամի նման արտադրանքի ներմուծման ծավալի 3 տոկոսը, եթե այն երկրներին, որոնց առանձին բաժին է ընկնում ավելի քիչ, քան ներմուծող Անդամի նման արտադրանքի ներմուծման ծավալի 3 տոկոսը, համատեղ բաժին ընկնի ոչ ավելի, քան ներմուծող Անդամի նման արտադրանքի ներմուծման ծավալի 7 տոկոսը:

5.9 Հակագնագցման վարույթը չի խոչընդոտում մաքսագերծման գործընթացները:

5.10 Ուսումնասիրությունները, բացառությամբ հատուկ հանգամանքների, եզրափակվում են դրանց նախաձեռնումից հետո մեկ տարվա և բոլոր դեպքերում ոչ ավելի, քան 18 ամսվա ընթացքում:

Հոդված 6. Ապացույցներ

6.1 Հակագնագցման ուսումնասիրության բոլոր շահագրգիռ կողմերին ծանուցվում է իրավասու մարմնի պահանջած տեղեկությունների մասին, և բավարար հնարավորություն է տրվում գրավոր ներկայացնելու այն բոլոր ապացույցները, որոնք նրանք համարում են խնդրո առարկա ուսումնասիրությանն առնչվող:

6.1.1 Ուսումնասիրության ընթացքում օգտագործվող հարցաթերթեր ստացած արտահանողներին կամ օտարերկրյա արտադրողներին պատասխանելու համար առնվազն 30 օր է տրվում¹⁵: 30-օրյա ժամկետը երկարաձգելու բոլոր պահանջները պետք է պատշաճորեն հաշվի առնվեն, և հիմնավոր պատճառաբանության դեպքում երկարաձգումը պետք է թույլատրվի, երբ հնարավոր է:

6.1.2 Որևէ շահագրգիռ կողմի ներկայացրած գրավոր ապացույցներն շտապ կարգով մատչելի են դարձվում ուսումնասիրությանը մասնակցող մյուս շահագրգիռ կողմերի համար՝ հաշվի առնելով գաղտնի տեղեկությունների պաշտպանության պահանջները:

6.1.3 Ուսումնասիրություն նախաձեռնելուն պես իրավասու մարմինը 5-րդ Հոդվածի 1-ին կետի համաձայն ստացված դիմումի ամբողջական տեքստը տրամադրում է հայտնի արտահանողներին¹⁶ և արտահանող Անդամ երկրի իրավասու մարմնին և պահանջվելու դեպքում այն մատչելի է դարձնում գործին առնչվող այլ շահագրգիռ կողմերի համար: Պատշաճորեն հաշվի է առնվում 5-րդ կետով նախատեսված՝ գաղտնի տեղեկության պաշտպանության պահանջը:

6.2 Հակագնագցման ուսումնասիրության ամբողջ ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերին իրենց շահերը պաշտպանելու լիարժեք հնարավորություն է տրվում: Այս առումով, իրավասու մարմինը պահանջ լինելու դեպքում բոլոր շահագրգիռ կողմերին հնարավորություն է ընձեռում հանդիպելու հակառակ շահեր ունեցող կողմերին, որպեսզի կարելի լինի հակադիր տեսակետներ ներկայացնել ու հերքող փաստարկներ բերել: Այդ հնարավորություններն ապահովելիս պետք է հաշվի առնվեն գաղտնիության պաշտպանության անհրաժեշտությունն ու կողմերի հարմարությունը: Ոչ մի կողմի չի պարտադրվում մասնակցել հանդիպումներին, և չմասնակցելու հանգամանքը բացասաբար չի անդրադարձնում այդ կողմի գործի վրա: Շահագրգիռ կողմերը հիմնավորման դեպքում իրավունք ունեն նաև բանավոր ներկայացնելու այլ տեղեկություններ:

6.3 Իրավասու մարմինը 2-րդ կետի համաձայն տրամադրված բանավոր տեղեկությունները հաշվի է առնում միայն այնքանով, որքանով դրանք հետազայում գրավոր վերարտադրվել ու մատչելի են դարձվել մյուս շահագրգիռ կողմերին՝ համաձայն 1.2 ենթակետի:

6.4 Իրավասու մարմինը հնարավորության դեպքում շահագրգիռ կողմերին յուրաժամանակ հնարավորություն է ընձեռում տեսնելու բոլոր այն տեղեկությունները, որոնք առնչվում են իրենց գործի ներկայացմանը, գաղտնի չեն՝ համաձայն 5-րդ կետի սահմանման, և որոնք իրավասու մարմնին օգտագործել է հակագնագցման ուսումնասիրությունների ընթացքում, և այդ տեղեկությունների վրա հիմնվելով՝ նախապատրաստելու գործի ներկայացումը:

¹⁵ Որպես ընդհանուր կանոն՝ արտահանողների ժամկետի հաշվարկումը սկսվում է հարցաթերթի ստացման օրվանից, որն այս առումով ստացված է համարվում պատասխանողին դրա առաքման, կամ արտահանող Անդամի համապատասխան դիվանագիտական ներկայացուցչին, կամ ԱՀԿ Անդամ առանձին մաքսային տարածքի դեպքում՝ արտահանող տարածքի պաշտոնական ներկայացուցչին դրա փոխանցման օրվանից մեկ շաբաթ հետո:

¹⁶ Հասկացվում է, որ գործին առնչվող արտահանողների շատ մեծ թվի դեպքում գրավոր դիմումի ամբողջական տեքստը պետք է տրամադրվի միայն արտահանող Անդամի իրավասու մարմնին կամ համապատասխան առևտրային միությանը:

6.5 Հիմնավոր պատճառաբանության ներկայացման դեպքում իրավասու մարմինը որպես գաղտնի է վերաբերվում այն տեղեկությանը, որը գաղտնի է իր բնույթով (օրինակ՝ այն պատճառով, որ դրա բացահայտումը մրցակցային կարևոր առավելություն կհանդիսանա մրցակցի համար, կամ որ դրա բացահայտումը կարող է վնաս պատճառել այդ տեղեկությունը տրամադրող անձին կամ էլ այն անձին, ումից այդ անձը ձեռք է բերել տեղեկությունը), կամ որը ուսումնասիրության կողմերը ներկայացրել են գաղտնիության պայմանով: Այդպիսի տեղեկությունը չի բացահայտվում առանց այն ներկայացնող կողմի հատուկ թույլտվության¹⁷:

6.5.1 Իրավասու մարմինը գաղտնի տեղեկություն ներկայացնող շահագրգիռ կողմերից պահանջում է ներկայացնել դրանց ոչ գաղտնի ամփոփագրերը: Այդ ամփոփագրերը պետք է բավարար մանրամասնությամբ լինեն, որպեսզի թույլ տան հարկ եղած չափով հասկանալ գաղտնի կերպով ներկայացված տեղեկության բուն էությունը: Բացառիկ դեպքերում, այդ կողմերը կարող են նշել, որ այդ տեղեկությունը հնարավոր չէ ամփոփագրել: Այդպիսի բացառիկ հանգամանքներում պետք է հաղորդագրություն տրամադրվի ամփոփագրման անհնարինության պատճառների վերաբերյալ:

6.5.2 Եթե իրավասու մարմինը համարում է, որ գաղտնիության պահանջը հիմնավորված չէ, և եթե տեղեկություն ներկայացնողը չի կամենում հրապարակայնացնել տեղեկությունը կամ թույլատրել դրա բացահայտումն ընդհանրացված կամ ամփոփագրված տեսքով, ապա իրավասու մարմինը կարող է անտեսել այդ տեղեկությունը, եթե համապատասխան աղբյուրներից իրավասու մարմնի համար համոզիչ ապացույցներ չկան, որ տեղեկությունը ճիշտ է¹⁸:

6.6 Բացառությամբ 8-րդ կետում նշված հանգամանքների, իրավասու մարմինն ուսումնասիրության ընթացքում համոզվում է շահագրգիռ կողմերի ներկայացրած այն տեղեկությունների ճշտության մեջ, որոնց վրա հիմնված են նրա հայտնաբերումները:

6.7 Տրամադրված տեղեկությունների ճշտության մեջ համոզվելու կամ հետագա մանրամասներ ձեռք բերելու նպատակով իրավասու մարմինը կարող է պահանջվող ուսումնասիրություններ իրականացնել այլ Անդամների տարածքում, եթե ձեռք է բերել համապատասխան ընկերությունների համաձայնությունը և տեղեկացրել է տվյալ Անդամի կառավարության ներկայացուցիչներին, և եթե տվյալ Անդամը չի առարկում ուսումնասիրությանը: Այլ Անդամների տարածքում կատարվող ուսումնասիրությունների վրա տարածվում են I Հավելվածում նկարագրված ընթացակարգերը: Հաշվի առնելով գաղտնիության պահպանման պահանջները՝ իրավասու մարմինը ցանկացած այդպիսի ուսումնասիրության արդյունքները մատչելի է դարձնում, կամ դրանք 9-րդ կետի համաձայն բացահայտում է այն ընկերությունների համար, որոնց դրանք վերաբերում են, և կարող է այդ արդյունքները մատչելի դարձնել դիմողների համար:

6.8 Նախնական և վերջնական եզրակացությունները՝ դրական կամ բացասական, կարող են կայացվել՝ հիմնվելով առկա փաստերի վրա այն դեպքերում, երբ որևէ շահագրգիռ կողմ արգելում է մուտքը դեպի անհրաժեշտ տեղեկությունները կամ այլ կերպ դրանք չի տրամադրում պատշաճ ժամկետի ընթացքում կամ զգալիորեն խոչընդոտում է ուսումնասիրությունը: Սույն կետը կիրառելիս պահպանվում են II Հավելվածի դրույթները:

6.9 Նախքան վերջնական եզրակացություն կայացնելը, իրավասու մարմինը բոլոր շահագրգիռ կողմերին տեղեկացնում է դիտարկված այն էական փաստերի մասին, որոնք հիմք են հանդիսացել վերջնական միջոցների կիրառման վերաբերյալ որոշման համար: Այդպիսի բացահայտումը պետք է կատարվի յուրաժամանակ, որպեսզի կողմերն իրենց շահերը պաշտպանելու բավարար ժամանակ ունենան:

6.10 Որպես կանոն՝ իրավասու մարմինն ուսումնասիրության ենթակա արտադրանքի յուրաքանչյուր հայտնի արտահանողի կամ արտադրողի համար առանձին գնագցման չափ է որոշում: Այն դեպքերում, երբ գործում ընդգրկված արտահանողների, արտադրողների, ներմուծողների կամ արտադրանքների տեսակների թիվն այնքան մեծ է, որ այդ կերպ որոշելն անհնարին է դառնում, իրավասու մարմինը կարող է իր քննությունը սահմանափակել կամ շահագրգիռ կողմերի, կամ արտադրանքների խելամիտ թվով՝ օգտագործելով մոտոշային խմբեր, որոնք վիճակագրորեն հիմնավորված են՝ ելնելով ընտրություն կատարելու ժամանակ իրավասու մարմնի տրամադրության տակ եղած տեղեկություններից, կամ խնդրո առարկա երկրից արտահանման ծավալի այն մեծագույն տոկոսաչափով, որը կարող է պատշաճորեն ուսումնասիրվել:

6.10.1 Սույն կետի համաձայն կատարված՝ արտահանողների, արտադրողների, ներմուծողների կամ արտադրանքների տեսակների ցանկացած ընտրություն գերադասելի է կատարել տվյալ

¹⁷ Անդամները տեղյակ են, որ որոշ Անդամների տարածքում կարող է բացահայտում պահանջվել համաձայն պաշտպանության նեղորեն հատկանշված կարգի:

¹⁸ Անդամները համաձայնում են, որ գաղտնիության պահանջը չպետք է կամայականորեն մերժվի:

արտահանողների, արտադրողների կամ ներմուծողների հետ խորհրդակցելով ու նրանց համաձայնությամբ:

6.10.2 Այն դեպքերում, երբ իրավասու մարմինը սույն կետի համաձայն սահմանափակել է իր քննությունը, իրավասու մարմինը այնուամենայնիվ առանձին գնագցման չափ է որոշում նախապես չընտրված ցանկացած արտահանողի կամ արտադրողի համար, ով անհրաժեշտ տեղեկություններ է ներկայացնում՝ այդ տեղեկություններն ուսումնասիրությունների ընթացքում հաշվի առնելու համար հարմար ժամկետում, բացառությամբ՝ երբ արտահանողների կամ արտադրողների թիվն այնքան մեծ է, որ առանձին քննությունների անցկացումն իրավասու մարմնի համար անհիմն ծանրաբեռնվածություն է ստեղծում և կարող է խոչընդոտել ուսումնասիրությունների ժամանակին եզրափակումը: Կամավոր պատասխանների համար խոչընդոտներ չեն ստեղծում:

6.11 Սույն Համաձայնագրի նպատակներով «շահագրգիռ կողմերը» ներառում է.

) ուսումնասիրության ենթակա արտադրանք արտահանողը կամ դրա օտարերկրյա արտադրողը կամ ներմուծողը, կամ առևտրային կամ գործարար միությունը, որի անդամների մեծամասնությունը այդ արտադրանքն արտադրողներ, արտահանողներ կամ ներմուծողներ են.

) արտահանող Անդամի կառավարությունը, և՛

) ներմուծող Անդամի նման արտադրանք արտադրողը կամ առևտրային կամ գործարար միությունը, որի անդամների մեծ մասը նման արտադրանք է արտադրում ներմուծող Անդամի տարածքում:

Այս ցանկը Անդամներին չի արգելում թույլ տալու, որ վերը նշվածներից տարբեր ներքին կամ օտարերկրյա կողմեր ընդգրկվեն որպես շահագրգիռ կողմեր:

6.12 Իրավասու մարմինը ուսումնասիրվող արտադրանքի արդյունաբերական օգտագործողներին և, այն դեպքերում, երբ արտադրանքը սովորաբար իրացվում է մանրածախ վաճառքի մակարդակում, սպառողներին ներկայացնող կազմակերպություններին հնարավորություն է ընձեռում տեղեկություններ ներկայացնել, որոնք առնչվում են գնագցմանը, վնասին և պատճառահետևանքային կապին:

6.13 Իրավասու մարմինը պատշաճորեն հաշվի է առնում այն դժվարությունները, որ կարող են ունենալ շահագրգիռ կողմերը, հատկապես փոքր ընկերությունները՝ պահանջված տեղեկությունները տրամադրելիս, և հնարավոր աջակցություն է ցույց տալիս:

6.14 Վերը սահմանված ընթացակարգերը կոչված չեն որևէ Անդամի իրավասու մարմնին արգելելու սույն Համաձայնագրի համապատասխան դրույթների համաձայն արագ գործողություններ իրականացնել՝ կապված ուսումնասիրության նախաձեռնման, նախնական կամ վերջնական եզրակացությունների՝ դրական կամ բացասական, կայացման հետ, կամ ժամանակավոր կամ վերջնական միջոցներ կիրառել:

Հոդված 7. Ժամանակավոր միջոցներ

7.1 Ժամանակավոր միջոցներ կարող են կիրառվել միայն, եթե.

) ուսումնասիրություն է նախաձեռնվել համաձայն 5-րդ Հոդվածի դրույթների, այդ առթիվ հրապարակային ծանուցում է տրվել, և շահագրգիռ կողմերին բավարար հնարավորություն է տրվել՝ տեղեկություններ ներկայացնելու և դիտողություններ կատարելու համար.

) նախնական դրական եզրակացություն է կայացվել գնագցման ու դրա հետևանքով ներքին արդյունաբերական ճյուղին հասցված վնասի վերաբերյալ.

) համապատասխան իրավասու մարմնն այդ միջոցի կիրառումը անհրաժեշտ է համարում՝ ուսումնասիրության ընթացքում պատճառվող վնասի կանխման համար:

7.2 Ժամանակավոր միջոցները կիրառվում են ժամանակավոր տուրքի կամ, գերադասելի է, գնագցման տուրքի նախնականորեն գնահատված արժեքին հավասար՝ կանխիկ ավանդի կամ պարտատոմսի միջոցով տրված երաշխիքի ձևով, որն ավելի չէ, քան նախնականորեն գնահատված գնագցման չափը: Գնահատված գումարի պահումը համապատասխան ժամանակավոր միջոց է, եթե սովորական տուրքն ու գնագցման տուրքի գնահատված արժեքը հատկանշվում են, և քանի դեռ գնահատված գումարի պահումը ենթակա է նույն պայմաններին, ինչպես այլ ժամանակավոր միջոցները:

7.3 Ժամանակավոր միջոցները կիրառվում են ուսումնասիրության նախաձեռնման օրվանից ոչ շուտ, քան 60 օր հետո:

7.4 Ժամանակավոր հակագնագցման միջոցի կիրառումը սահմանափակվում է հնարավորին չափ կարճատև ժամանակահատվածով, որը չի գերազանցում չորս ամիսը, կամ դիտարկվող առևտրի նշանակալի տոկոսաչափը ներկայացնող արտահանողների պահանջով համապատասխան իրավասու մարմնի կայացված որոշմամբ՝ վեց ամիսը չգերազանցող ժամանակահատվածով: Եթե իրավասու մարմնն ուսումնասիրության ընթացքում քննության է առնում, թե արդյոք գնագցման չափից փոքր տուրքը բավարար

կլինի վնասը վերացնելու համար, ապա այդ ժամանակահատվածները կարող են լինել, համապատասխանաբար, վեց և իններ ամիս:

7.5 Ժամանակավոր միջոցները կիրառելիս պահպանվում են 9-րդ Հոդվածի համապատասխան դրույթները:

Հոդված 8. Կամավոր գնային պարտավորություններ

8.1 Գործի վարույթը կարող է¹⁹ հետաձգվել կամ ընդհատվել՝ առանց ժամանակավոր միջոցների կամ հակագնագցման տուրքերի կիրառման, եթե որևէ արտահանող՝ իր գները վերանայելու կամ խնդրո առարկա տարածաշրջան գնագող գներով արտահանումները դադարեցնելու կամավոր պարտավորություններ է ստանձնում, որոնք բավարար են, որ իրավասու մարմինը համոզվի, որ գնագցման վնասակար ազդեցությունը վերացել է: Այդպիսի կամավոր պարտավորություններով սահմանված գների աճը ավելի չէ, քան անհրաժեշտ է գնագցման չափը վերացնելու համար: Ցանկալի է, որ գների աճը գնագցման չափից փոքր լինի, եթե այդպիսի աճը բավարար է ներքին արդյունաբերական ճյուղի վնասը վերացնելու համար:

8.2 Արտահանողներից կամավոր գնային պարտավորություններ չեն ակնկալվում կամ ընդունվում, քանի դեռ ներմուծող Անդամի իրավասու մարմինը նախնական դրական եզրակացություն չի կայացրել գնագցման և այդ գնագցման պատճառած վնասի վերաբերյալ:

8.3 Անհրաժեշտ չէ առաջարկվող կամավոր պարտավորություններն ընդունել, եթե իրավասու մարմինը դրանց ընդունումը համարում է անիրագործելի, օրինակ՝ երբ փաստացի կամ հնարավոր արտահանողների թիվը չափազանց մեծ է, կամ այլ պատճառներով, ներառյալ՝ ընդհանուր քաղաքականությանն առնչվող պատճառներով: Իրավասու մարմինը այդպիսի դեպք լինելու և հնարավորության պայմանում արտահանողին հայտնում է այն պատճառների մասին, որոնք իրեն մղել են պարտավորությունների ընդունումն աննպատակահարմար համարել, և հնարավորին չափով արտահանողին հնարավորություն է տալիս դրա վերաբերյալ դիտողություններ անել:

8.4 Կամավոր պարտավորություն ընդունելու դեպքում, այնուամենայնիվ, գնագցման ու վնասի ուսումնասիրությունն ավարտին է հասցվում, եթե այդպես է կամենում արտահանողը, կամ այդպես է որոշում իրավասու մարմինը: Եթե, այդ դեպքում, գնագցման կամ վնասի վերաբերյալ բացասական եզրակացություն է կայացվում, ապա կամավոր պարտավորությունն ինքնաբերաբար դադարեցվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ բացասական եզրակացությունը մեծապես արդյունք է գնային կամավոր պարտավորության գոյության: Այդ դեպքերում իրավասու մարմինը կարող է պահանջել, որ կամավոր պարտավորությունը շարունակի ուժի մեջ մնալ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան պատշաճ ժամկետով: Գնագցման ու վնասի վերաբերյալ դրական եզրակացություն կայացնելու դեպքում գնային կամավոր պարտավորությունը շարունակվում է՝ իր պայմաններին ու սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

8.5 Ներմուծող Անդամի իրավասու մարմինը կարող է արտահանողին առաջարկել կամավոր գնային պարտավորություններ ստանձնել, բայց ոչ մի արտահանողի չի պարտադրվում այդպիսի կամավոր պարտավորություններ ստանձնել: Այն փաստը, որ արտահանողը չի առաջարկում այդպիսի կամավոր պարտավորություններ վերցնել իր վրա կամ չի ընդունում այդ անելու առաջարկը, ոչ մի կերպ բացասաբար չի անդրադառնում տվյալ գործի քննարկան վրա: Իրավասու մարմինը այնուամենայնիվ ազատ է եզրակացնելու, որ գնագող ներմուծումը շարունակվելու դեպքում վնասի վտանգի իրականանալն ավելի հավանական է դառնում:

8.6 Ներմուծող Անդամի իրավասու մարմինը կարող է ցանկացած արտահանողից, որի կամավոր պարտավորությունն ընդունվել է, պահանջել պարբերաբար տեղեկություններ ներկայացնել կամավոր պարտավորության կատարման առնչությամբ ու թույլատրել գործին առնչվող տեղեկությունների ստուգումը: Կամավոր պարտավորության խախտման դեպքում ներմուծող Անդամի իրավասու մարմինը կարող է սույն Համաձայնագրի համաձայն ու նրա դրույթներին համապատասխան շտապ միջոցներ ձեռնարկել, որոնք կարող են լինել ժամանակավոր միջոցների անհապաղ կիրառման տեսքով՝ օգտագործելով առկա ամենաարժանահավատ տեղեկությունները: Այդ դեպքերում վերջնական տուրքերը կարող են գանձվել սույն Համաձայնագրի համաձայն՝ այդ ժամանակավոր միջոցների կիրառման օրվանից ոչ ավելի, քան 90 օր առաջ սպառման համար մուտք գործած արտադրանքների նկատմամբ, բացառությամբ որ այդպիսի հետադարձ գնահատումը չի կիրառվում կամավոր պարտավորության խախտումից առաջ մուտք գործած ներմուծումների նկատմամբ:

¹⁹ «Կարող է» բառերը չեն մեկնաբանվում որպես թույլտվություն՝ վարույթը շարունակելու գնային պարտավորությունների կիրառման հետ միաժամանակ, բացառությամբ 4-րդ կետով նախատեսվածի:

Հողված 9. Հակազնագցման տուրքերի կիրառում և գանձում

9.1 Հակազնագցման տուրք կիրառելու կամ չկիրառելու մասին որոշումն այն դեպքերում, երբ կիրառման համար բոլոր պահանջները կատարված են, և կիրառվելիք հակազնագցման տուրքը գնագցման ամբողջ չափին հավասար կամ դրանից փոքր լինելու մասին որոշումը ներմուծող Անդամի իրավասու մարմնի կայացնելիք որոշումներ են: Ցանկալի է, որ կիրառումը թույլատրելի լինի բոլոր Անդամների տարածքներում, և որ տուրքը գնագցման չափից փոքր լինի, եթե այդպիսի փոքր տուրքը բավարար կլինի վերացնելու ներքին արդյունաբերական ճյուղի վնասը:

9.2 Եթե որևէ արտադրանքի նկատմամբ հակազնագցման տուրք է կիրառվում, ապա այդ հակազնագցման տուրքը գանձվում է յուրաքանչյուր դեպքի համար համապատասխան չափերով, առանց խտրություն դնելու բոլոր աղբյուրներից այդ արտադրանքի ներմուծումների նկատմամբ, որոնք պարզվել է, որ գնագցող են և վնաս են հասցնում, բացառությամբ այն աղբյուրներից եկող ներմուծումների, որոնցից ընդունվել են սույն Համաձայնագրի պայմանների համաձայն ստանձնված գնային պարտավորություններ: Իրավասու մարմինը նշում է քննարկվող արտադրանքի մատակարարի կամ մատակարարների անունները: Եթե այնուամենայնիվ նույն երկրից մի շարք մատակարարներ են ընդգրկված, և անհնար է նշել այդ բոլոր մատակարարների անունները, ապա իրավասու մարմինը կարող է հատկանշել տվյալ մատակարարող երկիրը: Եթե գործում ընդգրկված են մի շարք մատակարարներ մեկից ավելի երկրներից, ապա իրավասու մարմինը կարող է նշել կամ բոլոր մատակարարների անունները, կամ, եթե դա անիրագործելի է, ապա կարող է հատկանշել գործում ընդգրկված բոլոր մատակարարող երկրները:

9.3 Հակազնագցման տուրքի մեծությունը չի գերազանցում 2-րդ Հողվածի համաձայն սահմանված գնագցման չափը:

9.3.1 Եթե հակազնագցման տուրքի մեծությունը գնահատվում է հետադարձ հիմունքով, ապա հակազնագցման տուրքերի վճարման վերջնական պարտավորությունների որոշումը կատարվում է հնարավորին չափ շուտ՝ սովորաբար 12 ամսվա և ամեն դեպքում ոչ ավելի, քան 18 ամսվա ընթացքում՝ հաշված այն օրվանից, երբ հակազնագցման տուրքի մեծության վերջնական գնահատման համար պահանջը ներկայացվել է²⁰: Ցանկացած ետվճարում կատարվում է շտապ կարգով և, սովորաբար, սույն ենթակետի համաձայն վերջնական պարտավորության որոշումից հետո ոչ ուշ, քան 90 օրվա ընթացքում: Ցանկացած դեպքում, եթե ետվճարումն 90 օրվա ընթացքում չի կատարվել, ապա իրավասու մարմինը բացատրություն է տալիս, եթե դրա համար պահանջ է ներկայացվում:

9.3.2 Եթե հակազնագցման տուրքի մեծությունը գնահատվում է նախատեսական հիմունքով, ապա պահանջի ներկայացման դեպքում ապահովվում է գնագցման չափից ավելի վճարված ցանկացած տուրքի շտապ ետվճարումը: Գնագցման փաստացի չափից ավելի վճարված որևէ այդպիսի տուրքի ետվճարումը սովորաբար կատարվում է 12 ամսվա և ամեն դեպքում ոչ ավելի, քան 18 ամսվա ընթացքում՝ հաշված այն օրվանից, երբ հակազնագցման տուրքի ենթակա արտադրանքի ներմուծողը ապացույցներով պատշաճորեն հիմնավորված՝ ետվճարման պահանջ է ներկայացրել: Թույլատրված ետվճարումը սովորաբար կատարվում է վերը նշված որոշումից հետո՝ 90 օրվա ընթացքում:

9.3.3 Իրավասու մարմինը՝ ետվճարման կամ ետվճարման չափի մասին որոշում կայացնելիս, երբ արտահանման գինը կազմված է 2-րդ Հողվածի 3-րդ կետի համաձայն, պետք է հաշվի առնի սովորական արժեքի ցանկացած փոփոխություն, ներմուծման և վերավաճառքի միջև եղած ծախսերի ցանկացած փոփոխություն և վերավաճառքի գնի շարժերը, որոնք համապատասխանաբար արտահայտվում են հերթական վաճառքի գների մեջ, և պետք է հաշվարկի արտահանման գինը՝ նվազեցնում չկատարելով հակազնագցման տուրքի արժեքի համար, որը վճարվում է, երբ ներկայացված են վերը նշվածի եզրափակիչ ապացույցները:

9.4 Եթե իրավասու մարմինը սահմանափակում է իր քննությունը համաձայն 6-րդ Հողվածի 10-րդ կետի երկրորդ նախադասության, ապա քննության մեջ չընդգրկված արտահանողներից կամ արտադրողներից եկող ներմուծումների նկատմամբ կիրառվող որևէ հակազնագցման տուրք չի գերազանցում.

-) ընտրված արտահանողների կամ արտադրողների համար սահմանված գնագցման չափի կշռված միջինը, կամ՝
-) ընտրված արտահանողների կամ արտադրողների սովորական արժեքի կշռված միջինի և առանձին քննության չառնված արտահանողների կամ արտադրողների արտահանման գների միջև տարբերությունը, եթե հակազնագցման տուրքերի վճարման պարտավորությունը հաշվարկված է՝ ելնելով նախատեսական սովորական արժեքից,

²⁰ Հասկացվում է, որ սույն ենթակետում և 3.2 ենթակետում նշված ժամկետի պահպանումը կարող է հնարավոր չլինել, երբ խնդրո

ընդ որում՝ իրավասու մարմինը սույն կետի նպատակներով անտեսում է գրոյական և նվազագույն չափերն ու 6-րդ Հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքներում սահմանված չափերը: Իրավասու մարմինն առանձին տուրքեր ու սովորական արժեքներ է կիրառում ցանկացած այն արտահանողից կամ արտադրողից եկող ներմուծումների նկատմամբ, որն ուսումնասիրությունների ընթացքում անհրաժեշտ տեղեկություններ է տրամադրել, ինչպես նախատեսված է 6-րդ Հոդվածի 10.2 ենթակետում:

9.5 Եթե ներմուծող Անդամ երկրում արտադրանքը ենթակա է հակազնագցման տուրքի, ապա իրավասու մարմինը շտապ վերաքննություն է անցկացնում, որպեսզի առանձին գնագցման չափ սահմանի խնդրո առարկա արտահանող երկրի այն արտահանողների կամ արտադրողների համար, ովքեր ուսումնասիրման ժամանակահատվածում արտադրանքը ներմուծող Անդամ երկիր չեն արտահանել, ընդ որում՝ այդ արտահանողները կամ արտադրողները կարող են ցույց տալ, որ իրենք փոխկապակցված չեն արտահանող երկրի այն արտահանողների կամ արտադրողների հետ, ովքեր ենթակա են արտադրանքի նկատմամբ հակազնագցման տուրքի: Այդ վերաքննությունը նախաձեռնվում ու կատարվում է արագացված հիմունքներով՝ համեմատած ներմուծող Անդամի՝ տուրքի գնահատման ու վերաքննության սովորական վարույթների հետ: Այդ արտահանողներից կամ արտադրողներից եկող ներմուծումների նկատմամբ հակազնագցման տուրքեր չեն գանձվում, քանի դեռ վերաքննությունն ընթացքի մեջ է: Իրավասու մարմինը այնուամենայնիվ կարող է գնահատումը կասեցնել և(կամ) երաշխիքներ պահանջել, որպեսզի հավաստիանա, որ վերաքննության արդյունքում այդ արտադրողների կամ արտահանողների առնչությամբ գնագցում պարզելու դեպքում հակազնագցման տուրքերը կարող են հետադարձորեն գանձվել՝ սկսած վերաքննության նախաձեռնման օրվանից:

Հոդված 10. Հետադարձություն

10.1 Ժամանակավոր միջոցներն ու հակազնագցման տուրքերը կիրառվում են միայն այն արտադրանքների նկատմամբ, որոնք սպառման համար մուտք են գործել համապատասխանաբար 7-րդ Հոդվածի 1-ին կետի և 9-րդ Հոդվածի 1-ին կետի համաձայն կայացված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ հաշվի առնելով սույն Հոդվածով սահմանված բացառությունները:

10.2 Եթե վերջնական եզրակացություն է կայացվել վնասի մասին (բայց ոչ վնասի վտանգի կամ արդյունաբերական ճյուղի ստեղծման էական կասեցման մասին), կամ, վնասի վտանգի մասին վերջնական եզրակացության դեպքում, եթե գնագցող ներմուծման ազդեցությունը ժամանակավոր միջոցների բացակայությամբ կհանգեցներ վնասի մասին եզրակացության, ապա հակազնագցման տուրքերը կարող են հետադարձորեն գանձվել այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում կիրառվել են ժամանակավոր միջոցներ, եթե դրանք եղել են:

10.3 Եթե վերջնական հակազնագցման տուրքը մեծ է վճարված կամ վճարվելիք ժամանակավոր տուրքից կամ երաշխիքի համար գնահատված արժեքից, ապա դրանց տարբերությունը չի գանձվում: Եթե վերջնական հակազնագցման տուրքը փոքր է վճարված կամ վճարվելիք ժամանակավոր տուրքից կամ երաշխիքի համար գնահատված արժեքից, ապա դրանց տարբերությունը հետ է վճարվում, կամ տուրքը վերահաշվարկվում է՝ կախված տվյալ դեպքից:

10.4 Բացառությամբ 2-րդ կետում նախատեսվածի, եթե եզրակացություն է կայացված վնասի վտանգի կամ էական կասեցման մասին (բայց դեռ վնաս չի հասցված), ապա վերջնական հակազնագցման տուրքը կարող է կիրառվել միայն վնասի վտանգի կամ էական կասեցման մասին եզրակացության օրվանից սկսած, և ժամանակավոր միջոցների կիրառման ժամանակահատվածի ընթացքում կատարված կանխիկ ավանդները հետ են վճարվում, իսկ պարտատոմսերն ազատվում են շտապ կարգով:

10.5 Եթե վերջնական եզրակացությունը բացասական է, ապա ժամանակավոր միջոցների կիրառման ժամանակահատվածի ընթացքում կատարված կանխիկ ավանդները հետ են վճարվում, իսկ պարտատոմսերն ազատվում են շտապ կարգով:

10.6 Վերջնական հակազնագցման տուրքը կարող է գանձվել այն արտադրանքների նկատմամբ, որոնք սպառման համար մուտք են գործել ժամանակավոր միջոցների կիրառման օրվանից՝ ոչ ավելի, քան 90 օր առաջ, եթե իրավասու մարմինը խնդրո առարկա գնագցված արտադրանքի առնչությամբ եզրակացնում է, որ.

- ա) վնաս հասցնող գնագցումը ունի նախապատմություն, կամ ներմուծողը տեղյակ էր կամ պիտի տեղյակ լիներ, որ արտահանողը գնագցող գործունեություն է վարում, և որ այդ գնագցումը վնաս կհասցնի, և՛
- բ) վնասը հասցվում է համեմատաբար կարճ ժամանակահատվածում արտադրանքի մեծածավալ գնագցող ներմուծումներով, ինչը կարող է լրջորեն նվազեցնել կիրառվելիք վերջնական

հակազնագցման տուրքի վերականգնողական ազդեցությունը՝ հաշվի առնելով գնագրողներն ու մեծածախ առևտրային ընկերությունները (ինչպես նաև հանրապետության (ինչպես նաև հանրապետության) արտադրանքի պաշարների արագ կուտակումը), ընդ որում, եթե խնդրո առարկա ներմուծողներին դիտարկություններ անելու հնարավորություն է տրվել:

10.7 Ուսումնասիրություն նախաձեռնելուց հետո իրավասու մարմինը կարող է ձեռնարկել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են գնահատված գումարի պահումը, որը կարող է անհրաժեշտ լինել հակազնագցման տուրքերի հետադարձ գանձման համար, ինչպես նախատեսված է 6-րդ կետով, այն ժամանակ, երբ իրավասու մարմինը բավարար փաստեր ունի, որ այդ կետում նշված պայմանները բավարարված են:

10.8 Այն արտադրանքների նկատմամբ, որոնք սպառման համար մուտք են գործել ուսումնասիրության նախաձեռնման օրվանից առաջ, հետադարձորեն տուրքեր չեն գանձվում 6-րդ կետի համաձայն:

Հոդված 11. Հակազնագցման տուրքերի և կամավոր գնային պարտավորությունների տևողությունն ու վերաքննությունը

11.1 Հակազնագցման տուրքն ուժի մեջ է մնում այնքան ժամանակ և այն չափով, որքան անհրաժեշտ է վնաս պատճառող գնագցմանը հակազդելու համար:

11.2 Հարկ եղած դեպքում իրավասու մարմինը տուրքի կիրառման շարունակության անհրաժեշտությունը վերաքննում է իր սեփական նախաձեռնությամբ, կամ վերջնական հակազնագցման տուրքի կիրառման սկզբից բավականաչափ ժամանակ անցնելուց հետո՝ ըստ որևէ շահագրգիռ կողմի պահանջի, որը վերաքննության անհրաժեշտությունը հիմնավորող դրական տեղեկություններ է ներկայացնում²¹: Շահագրգիռ կողմերն իրավունք ունեն իրավասու մարմնից պահանջել քննության առնել, թե արդյոք տուրքի կիրառումն անհրաժեշտ է գնագցումը փոխհատուցելու համար, արդյոք հավանական է, որ վնասը կշարունակվի կամ կվերսկսվի տուրքի վերացման կամ տարափոխման դեպքում, կամ երկուսն էլ միաժամանակ: Եթե սույն կետով նախատեսված վերաքննության արդյունքում իրավասու մարմինը եզրակացնում է, որ հակազնագցման տուրքն այլևս հիմնավորված չէ, ապա այն դադարեցվում է անմիջապես:

11.3 Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից, ցանկացած վերջնական հակազնագցման տուրք վերացվում է ամենաուշը դրա կիրառման օրվանից (կամ սույն կետի, կամ 2-րդ կետի համաձայն կատարված ամենավերջին վերաքննության օրվանից, եթե այդ վերաքննությունն ընդգրկել է և գնագցումը, և վնասը) 5 տարի հետո, եթե իրավասու մարմինն այդ ժամկետից առաջ իր նախաձեռնությամբ կամ ներքին արդյունաբերական ճյուղի կողմից կամ դրա անունից՝ այդ ժամկետից բավական ժամանակ առաջ ներկայացված պատշաճորեն հիմնավորված պահանջով անցկացված վերաքննությամբ չի եզրակացնում, որ տուրքի վերացումը կարող է հանգեցնել գնագցման և վնասի շարունակմանը կամ վերսկսմանը²²: Տուրքի կիրառումը կարող է շարունակվել մինչև կպարզվեն այդ վերաքննության արդյունքները:

11.4 Ապացույցների և ընթացակարգի վերաբերյալ 6-րդ Հոդվածի դրույթները տարածվում են սույն Հոդվածի համաձայն կատարվող ցանկացած վերաքննության վրա: Ցանկացած այդպիսի վերաքննություն կատարվում է արագացված կարգով և սովորաբար եզրափակվում է վերաքննության նախաձեռնման օրվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում:

11.5 Սույն հոդվածի դրույթները՝ համապատասխան փոփոխությունների ենթարկվելուց հետո տարածվում են 8-րդ Հոդվածի համաձայն ընդունված գնային կամավոր պարտավորությունների վրա:

Հոդված 12. Հրապարակային ծանուցում և եզրակացությունների բացատրություն

12.1 Եթե իրավասու մարմինը համոզված է, որ բավարար ապացույցներ կան 5-րդ Հոդվածի համաձայն հակազնագցման ուսումնասիրություն նախաձեռնելու համար, ապա այն Անդամը կամ Անդամները, որոնց արտադրանքներն այդ ուսումնասիրության առարկա են, և այլ շահագրգիռ կողմերը, որոնք իրավասու մարմնին հայտնի են որպես դրանում շահագրգռություն ունեցող, ծանուցվում են, և հրապարակային ծանուցում է տրվում:

12.1.1 Ուսումնասիրության նախաձեռնման հրապարակային ծանուցումը պարունակում է կամ այլապես առանձին գեկուցագրով²³ մատչելի է դարձնում համապատասխան տեղեկություններ

²¹ Հակազնագցման տուրքերի վճարման վերջնական պարտավորության որոշումը, ինչպես նախատեսված է 9-րդ Հոդվածի 3-րդ կետով, ինքնին վերաքննություն չէ սույն Հոդվածի իմաստով:

²² Եթե հակազնագցման տուրքի մեծությունը գնահատված է հետադարձորեն, ապա 9-րդ Հոդվածի 3.1 ենթակետի համաձայն կատարված գնահատման ամենավերջին վարույթի ընթացքում արված հայտնաբերումն առ այն, որ տուրք չպետք է գանձվի, իրավասու մարմնից ինքնին չի պահանջում վերացնել վերջնական տուրքը:

²³ Եթե իրավասու մարմինը սույն Հոդվածի համաձայն տեղեկություններ ու բացատրություններ է տրամադրում առանձին գեկուցագրում, ապա ապահովում է, որ այդ գեկուցագիրը դրամատաչելի լինի հանրությանը:

հետևյալի վերաբերյալ.

-) արտահանող երկրի կամ երկրների անունները և քննարկվող արտադրանքը.
-) ուսումնասիրությունը նախաձեռնելու օրը.
-) հիմքերը, որոնցով դիմումի մեջ պնդվում է գնագցման առկայությունը.
-) այն գործոնների ամփոփագիրը, որոնց վրա հիմնված է վնասի առկայության մասին պնդումը.
-) այն հասցեները, որտեղ պետք է ուղարկվեն շահագրգիռ կողմերի ներկայացրած նյութերը.
-) ժամկետները, որոնց ընթացքում շահագրգիռ կողմերին թույլ է տրվում իրենց տեսակետները հայտնի դարձնել:

12.2 Հրապարակային ծանուցում է տրվում ցանկացած նախնական կամ վերջնական եզրակացության մասին՝ դրական թե բացասական, 8-րդ Հոդվածի համաձայն գնային կամավոր պարտավորություններ ընդունելու մասին ցանկացած որոշման մասին, այդ պարտավորությունների վերացման մասին և վերջնական հակագնագցման տուրքի վերացման մասին: Յուրաքանչյուր այդպիսի ծանուցում պարունակում է կամ այլապես առանձին զեկուցագրով բավարար մանրամասնությամբ մատչելի է դարձնում բոլոր այն փաստերի և իրավական հարցերի վերաբերյալ հայտնաբերումներն ու եզրակացությունները, որոնք ուսումնասիրող իրավասու մարմինը համարում է էական: Բոլոր այդպիսի ծանուցումներն ու զեկուցագրերն առաքվում են այն Անդամին կամ Անդամներին, որոնց արտադրանքն այդ եզրակացության կամ կամավոր պարտավորությունների առարկա է, և այլ շահագրգիռ կողմերին, որոնք հայտնի են որպես դրանում շահագրգռություն ունեցող:

12.2.1 Ժամանակավոր միջոցի կիրառման վերաբերյալ ծանուցումը պարունակում է կամ այլապես առանձին զեկուցագրով մատչելի է դարձնում բավարար մանրամասնությամբ բացատրություններ գնագցման ու վնասի վերաբերյալ նախնական եզրակացությունների առնչությամբ և հղումներ է անում այն փաստերին և իրավական հարցերին, որոնք հանգեցրել են փաստարկների ընդունմանը կամ մերժմանը: Այդ ծանուցումը կամ զեկուցագիրը, համապատասխանաբար հաշվի առնելով գաղտնի տեղեկությունների պաշտպանության պահանջները, մասնավորապես պարունակում է.

-) մատակարարների անունները կամ, երբ դա հնարավոր չէ, գործում ընդգրկված մատակարարող երկրների անունները.
-) արտադրանքի նկարագրությունը, որը բավարար է մաքսային նպատակների համար.
-) սահմանված գնագցման չափերը և 2-րդ Հոդվածի համաձայն արտահանման գնի ու սովորական արժեքի սահմանման ու համեմատության համար կիրառված եղանակի պատճառների վերաբերյալ ամբողջական բացատրություն.
-) վնասի մասին եզրակացությանն առնչվող 3-րդ Հոդվածում նշված նկատառումները.
-) եզրակացությանը հանգեցնող հիմնական պատճառները:

12.2.2 Այն դեպքում, երբ հաստատական եզրակացությամբ նախատեսվում է վերջնական տուրքի կիրառում կամ գնային կամավոր պարտավորության ընդունում, ուսումնասիրության եզրափակման կամ հետաձգման վերաբերյալ ծանուցումը պարունակում է կամ առանձին զեկուցագրով մատչելի է դարձնում փաստերի և իրավական հարցերի վերաբերյալ բոլոր գործին առնչվող տեղեկությունները և այն պատճառները, որոնք հանգեցրել են վերջնական միջոցների կիրառմանը կամ գնային կամավոր պարտավորությունների ընդունմանը՝ համապատասխանաբար հաշվի առնելով գաղտնի տեղեկությունների պաշտպանության պահանջները: Ծանուցումը կամ զեկուցագիրը մասնավորապես պարունակում է 2.1 ենթակետում նկարագրված տեղեկությունները, ինչպես նաև արտահանողների կամ ներմուծողների բերած փաստարկների կամ բողոքների ընդունման կամ մերժման պատճառները և 6-րդ Հոդվածի 10.2 ենթակետի համաձայն կայացված որոշումների հիմքերը:

12.2.3 8-րդ Հոդվածի համաձայն կամավոր պարտավորության ընդունումից հետո ուսումնասիրության դադարեցման կամ հետաձգման մասին հրապարակային ծանուցումը պարունակում է կամ առանձին զեկուցագրով մատչելի է դարձնում այդ պարտավորության ոչ գաղտնի մասը:

12.3 Սույն Հոդվածի դրույթները՝ համապատասխան փոփոխությունների ենթարկվելուց հետո, տարածվում են 11-րդ Հոդվածի համաձայն վերաքննությունների նախաձեռնման ու ավարտման, և հետադարձորեն տուրքեր կիրառելու մասին՝ 10-րդ Հոդվածով սահմանված որոշումների վրա:

Հոդված 13. Դատական վերաքննություն

Յուրաքանչյուր Անդամ, որի ներքին օրենսդրությունը պարունակում է դրույթներ հակագնագցման

միջոցների վերաբերյալ, պետք է դատական, միջնորդային կամ վարչական ատյաններ կամ ընթացակարգեր ունենա՝ այլոց թվում, 11-րդ Հոդվածի իմաստով վերջնական եզրակացություններին և եզրակացությունների վերաքննություններին առնչվող վարչական գործողությունների արագ վերաքննության նպատակով: Այդ ատյանները կամ ընթացակարգերը անկախ պետք է լինեն տվյալ եզրակացության կամ վերաքննության համար պատասխանատու իրավասու մարմնից:

Հոդված 14. Հակազնագցման գործողություն երրորդ երկրի անունից

14.1 Երրորդ երկրի անունից հակազնագցման գործողության համար դիմումը ներկայացնում է գործողություն պահանջող երրորդ երկրի իրավասու մարմինը:

14.2 Այդպիսի դիմումը հիմնավորվում է գների մասին տեղեկություններով, որպեսզի ցույց տրվի, որ ներմուծումները գնագցող են, և մանրամասն տեղեկություններով, որպեսզի ցույց տրվի, որ ենթադրվող գնագցումը վնաս է հասցնում երրորդ երկրում գտնվող տվյալ ներքին արդյունաբերական ճյուղին: Երրորդ երկրի կառավարությունը լիարժեք աջակցություն է տրամադրում ներմուծող երկրի իրավասու մարմնին ցանկացած լրացուցիչ տեղեկություն ձեռք բերելու հարցում, որը վերջինս կարող է պահանջել:

14.3 Այդպիսի դիմում դիտարկելիս ներմուծող երկրի իրավասու մարմինը հաշվի է առնում ենթադրվող գնագցման ազդեցությունները երրորդ երկրում տվյալ արդյունաբերական ճյուղի վրա՝ որպես ամբողջության. ասել է, թե վնասը չի գնահատվում միայն արդյունաբերական ճյուղի՝ դեպի ներմուծող երկիր արտահանումների կամ նույնիսկ արդյունաբերական ճյուղի ամբողջ արտահանումների վրա ենթադրվող գնագցման ունեցած ազդեցության առնչությամբ:

14.4 Որոշումը՝ սկսել վարույթը, թե ոչ, վերապահվում է ներմուծող երկրին: Եթե ներմուծող երկիրը որոշում է, որ պատրաստ է գործողություն ձեռնարկել, ապա Ապրանքների առևտրի խորհրդին՝ այդ գործողության թույլատրման համար դիմելու նախաձեռնությունը վերապահվում է ներմուծող երկրին:

Հոդված 15. Չարգացող Անդամ երկրներ

Ընդունվում է, որ սույն Համաձայնագրով հակազնագցման միջոցների կիրառումը քննարկելիս զարգացած Անդամ երկրները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն զարգացող Անդամ երկրների հատուկ իրավիճակին: Նախքան հակազնագցման տուրքերի կիրառումը, երբ դրանք կազդեն զարգացող Անդամ երկրների էական շահերին, ուսումնասիրվում են սույն համաձայնագրով նախատեսված հատուցման կառուցողական միջոցների հնարավորությունները:

ԳԼՈՒԽ II

Հոդված 16. Հակազնագցման գործունեության հանձնախումբ

16.1 Սույնով ստեղծվում է Հակազնագցման գործունեության հարցերով հանձնախումբ (սույն Համաձայնագրում հիշատակվում է որպես «Հանձնախումբ») կազմված Անդամներից յուրաքանչյուրի ներկայացուցիչներից: Հանձնախումբն ընտրում է իր սեփական Նախագահին և ժողով է գումարում ոչ պակաս, քան տարին երկու անգամ, և այլ դեպքերում՝ որևէ Անդամի պահանջով, ինչպես նախատեսված է սույն Համաձայնագրի համապատասխան դրույթներով: Հանձնախումբը կատարում է սույն Համաձայնագրով կամ Անդամների կողմից իր վրա դրված պարտականությունները և Անդամներին հնարավորություն է ընձեռում խորհրդակցելու Համաձայնագրի գործողության հետ կապված ցանկացած հարցի կամ դրա նպատակների իրականացման շուրջ: ԱՀԿ Քարտուղարությունը գործում է որպես Հանձնախմբի քարտուղարություն:

16.2 Հանձնախումբը կարող է անհրաժեշտության դեպքում ստեղծել օժանդակ մարմիններ:

16.3 Իրենց գործառույթներն իրականացնելիս Հանձնախումբը և օժանդակ մարմինները կարող են խորհրդակցել ցանկացած աղբյուրի հետ և տեղեկություններ ձեռք բերել ցանկացած աղբյուրից, որը նպատակահարմար են համարում: Այնուամենայնիվ, նախքան որևէ Անդամի իրավասության ներքո եղած աղբյուրից տեղեկություն հայցելը Հանձնախումբը կամ օժանդակ մարմինը տեղեկացնում է տվյալ Անդամին: Այն ձեռք է բերում Անդամի և այն ընկերության համաձայնությունը, որի հետ խորհրդակցելու է:

16.4 Անդամներն առանց ուշացման Հանձնախմբին զեկուցում են բոլոր ձեռնարկված նախնական կամ վերջնական հակազնագցման գործողությունների մասին: Այդ զեկուցագրերը մատչելի են Քարտուղարությունում՝ այլ Անդամների կողմից քննման համար: Անդամները կիսամյակը մեկ ներկայացնում են նաև զեկուցագրեր՝ նախորդ վեց ամիսների ընթացքում ձեռնարկված ցանկացած հակազնագցման գործողության վերաբերյալ: Կիսամյակային զեկուցագրերը ներկայացվում են համաձայնեցված օրինակելի ձևերով:

16.5 Յուրաքանչյուր Անդամ Հանձնախմբին ծանուցում է, ա) թե իր որ մարմինն է իրավասու նախաձեռնել և իրականացնել 5-րդ Հոդվածում հիշատակվող ուսումնասիրությունները, և՛ բ) այդպիսի ուսումնասիրությունների նախաձեռնումը և իրականացումը ղեկավարող ընթացակարգերի մասին:

Հոդված 17. Խորհրդակցություններ և վեճերի կարգավորում

17.1 Բացառությամբ սույնով այլ կերպ նախատեսվածի, Վեճերի կարգավորման փոխհամաձայնությունը տարածվում է սույն Համաձայնագրի համաձայն անցկացվող խորհրդակցությունների և վեճերի կարգավորման վրա:

17.2 Յուրաքանչյուր Անդամ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում սույն Համաձայնագրի գործողության վրա ազդող ցանկացած հարցի շուրջ մեկ այլ Անդամի ներկայացրած նյութերի նկատմամբ և դրանց շուրջ խորհրդակցության պատշաճ հնարավորություն է ընձեռում:

17.3 Եթե որևէ Անդամ համարում է, որ սույն Համաձայնագրով ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրեն հասնող որևէ օգուտ վերացվում կամ նվազեցվում է, կամ որ որևէ նպատակի իրականացում խոչընդոտվում է մեկ այլ Անդամի կամ այլ Անդամների կողմից, ապա այն կարող է խնդրո առարկա Անդամի կամ Անդամների հետ խորհրդակցելու գրավոր պահանջ ներկայացնել՝ այդ հարցի փոխադարձաբար գոհացուցիչ լուծում գտնելու նպատակով: Յուրաքանչյուր Անդամ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում այլ Անդամի՝ խորհրդակցության համար ներկայացված ցանկացած պահանջի նկատմամբ:

17.4 Եթե Անդամը, որը խորհրդակցություն է պահանջել, համարում է, որ 3-րդ կետի համաձայն անցկացված խորհրդակցությունները փոխադարձաբար ընդունելի լուծման չեն հանգեցրել, և եթե ներմուծող Անդամի իրավասու մարմինը վերջնական գործողություններ է ձեռնարկել, որպեսզի գանձի վերջնական հակագնազցման տուրքերը կամ ընդունի գնային պարտավորությունները, ապա այն կարող է հարցը ներկայացնել Վեճերի կարգավորման մարմին («ՎԿՄ»): Եթե ժամանակավոր միջոցը նշանակալի ազդեցություն ունի, և խորհրդակցություն պահանջող Անդամը համարում է, որ միջոցը ձեռնարկվել է հակասելով 7-րդ Հոդվածի 1-ին կետի դրույթներին, ապա այդ Անդամը կարող է նաև այդ հարցը ներկայացնել ՎԿՄ:

17.5 Բողոքող Անդամի պահանջով ՎԿՄ-ն հարցը քննության առնելու համար ստեղծում է քննախումբ՝ հիմնվելով.

-) պահանջը ներկայացնող Անդամի գրավոր հայտարարության վրա, որով մատնանշվում է, թե ինչպես է սույն Համաձայնագրի համաձայն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրեն հասնող որևէ օգուտ վերացվում կամ նվազեցվում, կամ որ խոչընդոտվում է Համաձայնագրի նպատակների իրականացումը, և՛
-) համապատասխան ներքին ընթացակարգերի համաձայն՝ ներմուծող Անդամի իրավասու մարմնին մատչելի դարձված փաստերի վրա:

17.6 5-րդ կետում հիշատակված հարցը քննության առնելիս քննախումբը.

-) խնդրին առնչվող փաստերը գնահատելիս որոշում է, թե արդյոք իրավասու մարմինը ճիշտ է սահմանել փաստերը, և արդյոք այն անսխալ ու անաչառ է գնահատել փաստերը: Եթե փաստերը ճիշտ են սահմանվել, և գնահատումն անսխալ ու անաչառ է եղել, ապա գնահատումը չեղյալ չի հայտարարվում, նույնիսկ եթե քննախումբն այլ եզրակացության է հանգել.
-) քննախումբը Համաձայնագրի համապատասխան դրույթները մեկնաբանում է միջազգային հանրային իրավունքի՝ մեկնաբանման սովորական կանոնների համաձայն: Եթե քննախումբը գտնում է, որ Համաձայնագրի համապատասխան դրույթը ենթարկվում է մեկից ավելի թույլատրելի մեկնաբանությունների, ապա քննախումբն իրավասու մարմնի միջոցը համարում է Համաձայնագրին համապատասխան, եթե այն հիմնված է այդ թույլատրելի մեկնաբանություններից մեկի վրա:

17.7 Քննախմբին տրամադրված գաղտնի տեղեկությունը չի բացահայտվում առանց այդ տեղեկությունը տրամադրող անձի, մարմնի կամ գերատեսչության պաշտոնական թույլտվության: Եթե քննախմբից այդպիսի տեղեկություն է պահանջվում, բայց քննախումբն այդ տեղեկությունը դուրս տալու թույլտվություն չունի, ապա տրամադրվում է տեղեկության ոչ գաղտնի ամփոփագիր, որը թույլատրել է տեղեկությունը տրամադրող անձը, մարմինը կամ գերատեսչությունը:

ԳԼՈՒԽ III

Հոդված 18. Եզրափակիչ դրույթներ

18.1 Մեկ այլ Անդամի գնագող արտահանումների նկատմամբ հատուկ գործողություններ կարող են

ձեռնարկվել միայն համաձայն ՄԱԳ-Հ-1994-ի դրույթների, ինչպես դրանք մեկնաբանված են սույն Համաձայնագրով²⁴:

18.2 Սույն Համաձայնագրի որևէ դրույթի առնչությամբ վերապահումներ չեն կարող արվել առանց մյուս Անդամների համաձայնության:

18.3 Հաշվի առնելով 3.1 և 3.2 ենթակետերը՝ սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են ուսումնասիրությունների և գոյություն ունեցող միջոցների վերաքննությունների վրա, որոնք նախաձեռնվել են համաձայն այն դիմումների, որոնք կատարվել են Անդամի համար ԱՀԿ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո:

18.3.1 19-րդ Հոդվածի 3-րդ կետում սահմանված ետվճարման ընթացակարգերի ժամանակ, գնագցման չափի հաշվարկների նկատմամբ կիրառվում են գնագցման վերաբերյալ ամենավերջին եզրակացության կամ վերաքննության մեջ օգտագործված կանոնները:

18.3.2 11-րդ Հոդվածի 3-րդ կետի նպատակներով, համարվում է, որ գոյություն ունեցող հակագնագցման միջոցները կիրառվում են ոչ ուշ, քան այն օրվանից, երբ Անդամի համար ուժի մեջ է մտնում ԱՀԿ Համաձայնագիրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Անդամի այդ ժամանակ գործող ներքին օրենսդրությունն արդեն ներառում է այդ կետում սահմանված տեսակի դրույթ:

18.4 Յուրաքանչյուր Անդամ ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ընդհանուր կամ մասնավոր բնույթի, որպեսզի երաշխավորի, որ ոչ ուշ, քան իր համար ԱՀԿ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը իր օրենքները, կանոնակարգերն ու վարչական ընթացակարգերը համապատասխանեն սույն Համաձայնագրի այն դրույթներին, որոնք կարող են կիրառվել տվյալ Անդամի նկատմամբ:

18.5 Յուրաքանչյուր Անդամ Հանձնախմբին տեղեկացնում է սույն Համաձայնագրին վերաբերող իր օրենքներում ու կանոնակարգերում և այդ օրենքների և կանոնակարգերի կիրարկման մեջ կատարվող ցանկացած փոփոխությունների մասին:

18.6 Հանձնախումբը տարին մեկ վերաքննում է սույն Համաձայնագրի իրականացումն ու գործողությունը՝ հաշվի առնելով դրա նպատակները: Հանձնախումբը տարին մեկ Ապրանքների առևտրի խորհրդին տեղեկացնում է այդ վերաքննություններով ընդգրկված ժամանակահատվածում տեղի ունեցած զարգացումների վերաբերյալ:

18.7 Սույն Համաձայնագրի Հավելվածները դրա անբաժանելի մաս են:

²⁴ Սույնը նպատակ չունի արգելելու, որ անհրաժեշտության դեպքում գործողություն ձեռնարկվի ՄԱԳ-Հ-1994-ի այլ համապատասխան դրույթների համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ I

6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՏԵՂՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

1. Ուսումնասիրության նախաձեռնման դեպքում, արտահանող Անդամի իրավասու մարմինը և այն ընկերությունները, որոնք հայտնի են որպես խնդրո առարկա, պետք է տեղեկացվեն տեղում ուսումնասիրություն կատարելու մտադրության մասին:

2. Եթե բացառիկ դեպքերում նախատեսվում է ուսումնասիրող խմբում ոչ կառավարական փորձագետներ ներգրավել, ապա արտահանող երկրի իրավասու մարմինն ու ընկերությունները տեղեկացվում են այդ մասին: Գաղտնիության պաշտպանության պահանջները խախտելու համար այդ ոչ կառավարական փորձագետները պետք է ենթակա լինեն պատասխանատվության գործուն միջոցների:

3. Օրինաչափ գործելակերպ պետք է լինի այցելությունը վերջնականորեն ծրագրելուց առաջ արտահանող Անդամի՝ խնդրո առարկա ընկերությունների հստակ համաձայնությունը ձեռք բերելը:

4. Խնդրո առարկա ընկերությունների համաձայնությունը ձեռք բերելուն պես, ուսումնասիրող իրավասու մարմինը պետք է արտահանող Անդամի իրավասու մարմնին ծանուցի այն ընկերությունների անուններն ու հասցեները, ուր պետք է այցելություն կատարվի, և համաձայնեցված ժամկետները:

5. Այցելությունը կատարելուց բավականաչափ առաջ այդ մասին պետք է ծանուցվի խնդրո առարկա ընկերություններին:

6. Հարցաթերթի բացատրության նպատակով այցելությունները պետք է կատարվեն միայն ըստ արտահանող ընկերության պահանջի: Այդպիսի այցելություն կարող է կատարվել միայն, եթե՝ ա) ներմուծող Անդամի իրավասու մարմինը ծանուցում է խնդրո առարկա Անդամի ներկայացուցիչներին, և՛ բ) վերջիններս չեն առարկում այցելությանը:

7. Քանի որ տեղում կատարվող ուսումնասիրության նպատակը տրամադրված տեղեկությունների ստուգումը կամ հետագա մանրամասների ձեռքբերումն է, այն պետք է անցկացվի հարցաթերթի պատասխանը ստանալուց հետո, եթե արտահանող ընկերությունը չի հանաձայնում հակառակին, և եթե ուսումնասիրող իրավասու մարմինը արտահանող Անդամի կառավարությունը տեղեկացրել է նախատեսվող այցելության մասին և վերջինս չի առարկում դրան: Այնուհետև, օրինաչափ գործելակերպ պետք է լինի այցելությունից առաջ խնդրո առարկա ընկերություններին ստուգման ենթակա տեղեկությունների ընդհանուր բնույթի և տրամադրվելիք հետագա տեղեկությունների մասին տեղեկացնելը, չնայած այս հանգամանքը չպետք է արգելի, որ տեղում պահանջվի լրացուցիչ մանրամասներ տրամադրել՝ ելնելով ձեռք բերված տեղեկություններից:

8. Արտահանող Անդամի իրավասու մարմնի կամ ընկերությունների արած և տեղում տարվող ուսումնասիրությունների արդյունավետության համար կարևոր հարցումներին կամ հարցերին, հնարավորության դեպքում, պետք է պատասխանել այցելությունից առաջ:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԱՌԿԱ ԱՄԵՆԱՀԱՎԱՍՏԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ 6-ՐԳ- ՀՈԳՎԱԾԻ 8-ՐԳ ԿԵՏԻ ԻՍԱՍՏՈՎ

1. Ուսումնասիրության նախաձեռնումից հետո հնարավորին չափ շուտ ուսումնասիրող իրավասու մարմինը պետք է մանրամասնորեն հատկանշի այն տեղեկությունները, որոնք պահանջվում են որևէ շահագրգիռ կողմից, և այն եղանակը, ըստ որի՝ շահագրգիռ կողմն իր պատասխանում պետք է կառուցի այդ տեղեկությունները: Իրավասու մարմինը պետք է նաև ապահովի, որ շահագրգիռ կողմը տեղյակ լինի, որ տեղեկությունները պատշաճ ժամկետում չտրամադրվելու դեպքում իրավասու մարմինն ազատ կլինի իր եզրակացությունները կայացնել՝ հիմնվելով առկա փաստերի վրա, ներառյալ՝ ուսումնասիրության նախաձեռնման համար ներքին արդյունաբերական ճյուղի ներկայացրած դիմումի մեջ ընդգրկվածները:

2. Իրավասու մարմինը կարող է նաև պահանջել, որ շահագրգիռ կողմն իր պատասխանները տրամադրի առանձնահատուկ միջոցի վրա (օրինակ՝ համակարգչային երիզների) կամ համակարգչային լեզվով: Այդպիսի պահանջ ներկայացնելիս իրավասու մարմինը պետք է հաշվի առնի պատասխանող կողմի՝ նախընտրելի միջոցի վրա կամ համակարգչային լեզվով պատասխանելու խելամիտ կարողությունները և չպետք է պահանջի, որ կողմն իր պատասխանի համար օգտագործի համակարգչային մի այնպիսի համակարգ, որն այլ է, քան կողմի օգտագործածը: Իրավասու մարմինը չպետք է համակարգչային պատասխան տալու իր պահանջը պահպանի, եթե շահագրգիռ կողմը համակարգչային հաշիվներ չի վարում, և եթե պահանջվող ձևով պատասխանի ներկայացումը լրացուցիչ չհիմնավորված ծանրաբեռնվածություն կստեղծի շահագրգիռ կողմի համար, այսինքն՝ այն կհանգեցնի լրացուցիչ չհիմնավորված ծախսերի ու դժվարությունների: Իրավասու մարմինը չպետք է առանձնատուկ միջոցի վրա կամ համակարգչային լեզվով պատասխանելու իր պահանջը պահպանի, եթե շահագրգիռ կողմն իր համակարգչային հաշիվները չի վարում այդպիսի միջոցի վրա կամ այդպիսի համակարգչային լեզվով, և եթե պահանջվող ձևով պատասխանի ներկայացումը լրացուցիչ չհիմնավորված ծանրաբեռնվածություն կստեղծի շահագրգիռ կողմի համար, այսինքն՝ այն կհանգեցնի լրացուցիչ չհիմնավորված ծախսերի ու դժվարությունների:

3. Եզրակացություններ կայացնելիս պետք է հաշվի առնվեն այն բոլոր տեղեկությունները, որոնք ներկայացված են այնպես, որ կարող են առանց անհարկի դժվարությունների օգտագործվել ուսումնասիրության մեջ, որոնք տրամադրվել են յուրաժամանակ, և որոնք, երբ կիրառելի է, տրամադրվել են իրավասու մարմնի պահանջած միջոցների վրա կամ համակարգչային լեզվով: Եթե կողմը չի պատասխանում նախընտրելի միջոցի վրա կամ համակարգչային լեզվով, սակայն իրավասու մարմինը գտնում է, որ 2-րդ կետում նշված հանգամանքները բավարարված են, ապա չպետք է համարվի, որ նախընտրելի միջոցի վրա կամ համակարգչային լեզվով չպատասխանելը զգալիորեն խոչընդոտում է ուսումնասիրությունը:

4. Եթե իրավասու մարմինը տրամադրված տեղեկությունն առանձին միջոցի վրա (օրինակ՝ համակարգչային երիզով) մշակելու հնարավորություն չունի, ապա այդ տեղեկությունը պետք է տրամադրվի գրավոր նյութի ձևով կամ իրավասու մարմնի համար ընդունելի որևէ այլ ձևով:

5. Չնայած այն բանին, որ տրամադրված տեղեկությունները կարող են բոլոր առումներով կատարյալ չլինել, դա չպետք է իրավասու մարմնի համար դրանք անտեսելու հիմք հանդիսանա, եթե պատասխանող կողմը գործել է իր առավելագույն կարողությունների չափով:

6. Եթե տրամադրված ապացույցները կամ տեղեկությունները չեն ընդունվում, ապա պատասխանող կողմը պետք է անմիջապես տեղեկացվի դրա պատճառների մասին, և պետք է հնարավորություն ունենա պատշաճ ժամկետում հետագա բացատրություններ տալու՝ հաշվի առնելով ուսումնասիրության ժամկետները: Եթե իրավասու մարմինը բացատրությունները համարում է ոչ բավարար, ապա այդ ապացույցների ու տեղեկությունների մերժման պատճառները պետք է նշվեն ցանկացած հրապարակված եզրակացության մեջ:

7. Իրավասու մարմինը պետք է հատուկ շրջահայեցություն ցուցաբերի այն դեպքերում, երբ իր հայտնաբերումները, ներառյալ՝ սովորական արժեքին վերաբերողները, պետք է կայացնի՝ հիմնվելով երկրորդային աղբյուրներից քաղված տեղեկությունների վրա, ներառյալ՝ ուսումնասիրության նախաձեռնման դիմումի մեջ տրամադրված տեղեկությունները: Այդ դեպքերում իրավասու մարմինը, երբ հնարավոր է, պետք է ստուգի իր տրամադրության տակ եղած այլ անկախ աղբյուրներից քաղված տեղեկությունների ճշտությունը, ինչպիսիք են հրապարակված գնացուցակները, ներմուծման պաշտոնական վիճակագրությունն ու մաքսային հասույթները, և ուսումնասիրության ընթացքում այլ շահագրգիռ կողմերից ձեռք բերված տեղեկություններից քաղվածների ճշտությունը: Այնուամենայնիվ, պարզ է, որ եթե շահագրգիռ կողմը չի համագործակցում, և այդպիսով համապատասխան տեղեկությունը թաքցվել է իրավասու մարմնից, ապա այս իրավիճակը կարող է հանգեցնել տվյալ կողմի համար առավել անբարենպաստ արդյունքի, քան այն, որ կլինեի, եթե կողմը համագործակցեր: